			Ապահովվել է OIML հիմնարար D 1 փաստաթղթի թարգմանությունը, որում ներառված չափանիշները, մոտեցումները ևս կներառվեն ռազմավարության նախագծի օրենսդրական չափագիտության բաղադրիչի մեջ:	

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն				
Ծրագրի հերթական համարը	Նպատակ	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները
1	2	3	4	5
Կրթություն				
1.	Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում իրականացվող բարեփոխումների համապատասխանեցում հեռանկարային զարգացման ռազմավարական ուղղություններին	1.1 «ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	«ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթը 2022 թ. մարտի 16-ին ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: 2022 թվականի նոյեմբերի 16-ին ԱԺ կողմից ընդունվել է «ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքը:	
		1.2 «Մշակույթի պահպանության, զարգացման և հանրահռչակման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման		Մշակույթի պահպանության և զարգացման 2022-2027 թթ. ռազմավարության» մշակված նախագիծը սահմանված կարգով շրջանառվել է, տեղադրվել E-draft համակարգում: Կայացել են

		նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ		հանրային քննարկումներ ՀՀ ԱԺ, ոլորտի և հանրային հատվածի ներկայացուցիչների, ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից հասարակա-կական և աշակերտական խորհուրդների ձևաչափով: ՀՀ փոխվարչապետ Մ. Գրիգորյանի մոտ կայացած քննարկմանը ներկայացվել է ռազմավարության տեքստային տարբերակը և սահիկաշարը՝ Power-point ձևաչափով: Ներկայում անցկացվում են ընդհանուր քննարկումներ շահարգրգիռ գերատեսչությունների հետ: Ռազմավարության վերջնական և ամբողջական փաթեթը ՀՀ կառավարության հաստատմանը կներկայացվի 2023 թ. մայիսի 1-ին տասնօրյակում:
		1.3 «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտների 2022-2030 թվականների ռազմավարությունը և ռազմավարության գործողությունների պլանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման		«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտների 2023-2030 թթ. ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ Վարչապետի աշխատակազմ ներկայացման փուլում է: Ընթացել է ռազմա-

		նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ		վարության սահիկաշարի քննարկումներ ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրասենյակում և ՀՀ Ազգային Ժողովի գիտության, կրթության, մշակույ-թի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովում: Ռազմավարությունը ներկայացվել է շահագրգիռ գերատեսչություն-երի կարծիքի: Կազմակերպվել է հանրային քննարկում: Ստացվել են առաջարկություններ ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտա-սարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի կողմից: Ռազմավարությունը ամփոփման փուլում է:
2.	Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների լայն կիրառում ուսուցման ու կրթության կառավարման համակարգերում	2.1 Պետական բյուջեից ֆինանսավորվող հանրակրթական ուսումնական հաստատությունների դասագրքերի պատվերի ձևավորման և բաշխման գործընթացների մասին ՀՀ	2021 թվականի նոյեմբերի 29-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 81-Ն հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու կարգը» և 2022 թվականի հունիսի 9-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 20-Ն հրամանով հաստատվել է «Հանրակրթական առարկաների դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման, հրատարակման և հանրակրթության պետական	

		ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում	չափորոշչին դրանց համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգը»:	
		2.2 Ավարտական փաս-տաթղթերի թվայնացում	Միջոցառման կատարումն ապահովվել է ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 7-ի՝ «ՀՀ կառավարության 2000 թվականի հունիսի 15-ի N 320 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 454-Ն որոշմամբ, որի համաձայն՝ հաստատվել են հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտներին տրվող պետական նմուշի ավարտական փաստաթղթերի (հիմնական կրթության վկայական, միջնակարգ կրթության ատեստատ) թվայնացված ձևերը: 2021-2022 ուսումնական տարվանից սկսած՝ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատութ-յունների շրջանավարտների ավարտական փաստաթղթերը տրամադրվել են էլեկտրոնային եղանակով:	
		2.3 Առարկայական ուսուցիչների պակաս ունեցող դպրոցներում տվյալ առարկայի էլեկտրոնային ուսուցման համակարգի ներդնում, էլեկտրոնային ուսուցման գործիքների զարգացում	E-school Armenia նախագծի շրջանակներում իրականացվում է «Էլեկտրոնային ուսուցում. Մենթոր դպրոցներ» ծրագիրը, ինչպես նաև՝ համակցված ուսուցման համար նախատեսված app.e-school.am հարթակի փորձարկման աշխատանքները: Հեռավար ուսուցման կազմակերպման կարգին համապատասխան առնվազն 2300 աշակերտներ 2022 թ. ապրիլ-հունիս ամիսներին մասնակցել են հեռավար իրականացվող դասընթացներին: Հեռավար դասընթացներն իրականացվել են 1-ից 12-րդ դասարանների համար՝ ներառյալ ավագ դպրոցի առկա հոսքերը: Կրթական բովանդակությունն աշակերտներին մատուցվել է տեսադասերի, վեբինար հանդիպումների և էլեկտրոնային նյութերի տեղադրման միջոցով: Շաբաթական իրականացվել է 270 ժամ վեբինար և 175 ժամ էլեկտրոնային նյութերի տեղադրում: Իրականացվել է ամենօրյա աջակցություն՝ ծրագրի շահառուների համար: Գործել է հետադարձ կապ կենտրոնացված հեռավար ուսուցման դասընթացներին մասնակից դպրոցների, աշակերտների և ծնողների հետ՝ աշակերտների բացակայությունը պարզաբանելու, խնդիրները վերհանելու և ծրագիրը բարելավելու նպատակով:	

			Իրականացվել է ծրագրի մասնակից ուսուցիչների հարցում՝ հեռավար ուսուցման կազմակերպման բաժնի աշխատանքը գնահատելու նպատակով: Կենտրոնացված հեռավար ուսուցման ուսուցիչները մշակել են էլեկտրոնային ռեսուրսների տեղադրման ուղեցույց: - Հունիս ամսին կազմակերպվել է «Էլեկտրոնային ուսուցում. Մենթոր դպրոցներ» ծրագրի շրջանակներում. - 17 մենթոր դպրոցների 130 ուսուցիչներ իրականացրել են հեռավար դասավանդում ՀՀ 9 մարզերի 62 պատվիրատու դպրոցներում: Ծրագրի շահառու աշակերտների թիվը շուրջ 3200 է: Շաբաթական կտրվածքով իրականացվել է մոտ 960 ժամ հեռավար դասավանդում: -Իրականացվում է մենթորների շարունակական աջակցություն՝ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի Հեռավար ուսուցման կենտրոնի Որակի ապահովման խմբի կողմից: Ծրագրին միացել են ևս 6 մենթոր դպրոցներ: Հունիսի 27-ից հուլիսի 1-ը իրականացվել է նոր մենթոր դպրոցների 12 մենթորների վերապատրաստում, որի նպատակն էր ընտրված մենթոր դպրոցներին ծանոթացնել էլեկտրոնային ուսուցման սկզբունքներին և մոտեցումներին, զինել ինտերակտիվ ուսուցում ապահովելու, մենթորական աջակցության մշակույթը ներդնելու և զարգացնելու կարողություններով, ներկայացնել աշխատանքային պարտականությունները և ծրագրի իրականացման ռազմավարությունը՝ ապահովելով ծրագրի բարեհաջող մեկնարկ:	
3.	Նախադպրոցական կրթության մատչելիության ընդլայնում՝ 3-5 տարեկան երեխաների ընդգրկվածությունը հասցնելով 85 տոկոսի	3.3 ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման	ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի «Նախադպրոցական ուսումնական հաստատու-թյունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանելու մասին» N 1169-Ն որոշումը հաստատվել է և կարգի համաձայն ֆինանսավորումը մեկնարկել է 2022 թ. սեպտեմբեր ամսից: ՀՀ կառավարության 2022 թ. հուլիսի 21-ի «ՀՀ կառավարության 2021 թ. դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ	

		առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանելու մասին» N 1169-Ն որոշման գործարկում	կատարելու մասին» N 1108-Ն որոշմամբ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նախադպրոցական կրթությունն ապահովելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները վերաբաշխվել են Երևանի քաղաքապետարանին և ՀՀ մարզպետարաններին:	
		3.4 Մշակված չափանիշների համաձայն վերանորոգման, հիմնանորոգման և կառուցման ենթակա հաստատությունների ընտրություն և վերջնական ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում	2021 թվականի դեկտեմբերի 24-ին 500 մանկա-պարտեզի/նախակրթարանի կառուցման, հիմնանորոգման, վերանորոգման ցանկը ներկայացվել է ՀՀ կառավարություն: ՀՀ վարչապետի նախընտրական խոստումներում նշված՝ Գեղարքունիքի մարզի «Նորակերտ համայնքի մանկապարտեզի վերանորոգում» ծրագիրն ավարտվել է:	ՀՀ վարչապետի 2021 թ. հուլիսի 26-ի N 790-Լ որոշմամբ սահմանված մեթոդաբանությանը համապատասխան կազմվել է վերանորոգման, հիմնանորոգման և կառուցման ենթակա հաստատությունների ցանկը, որը պարբերաբար համալրման տրամաբանությամբ է կազմվել՝ հնարավորինս հստակեցնելով ցանկում ներառվող հաստատությունների առկա վիճակն ու ցանկում ընդգրկելու առաջնահերթությունը: Ցանկերը կազմելու ընթացքում է պարզվել, որ այն կառավարության որոշում չի կարող լինել, քանի որ աշխատանքային գործընթացում անընդհատ ճշգրտվում է և դրանք պետք է ներկայացնել ՀՀ

				կառավարություն՝ անընդհատ լրամշակելով և համադրելով տարբեր գերատեսչություններից ստացվող տեղեկատվությունը: Ուստի «3.4 Մշակված չափանիշների համաձայն վերանորոգման, հիմնանորոգման և կառուցման ենթակա հաստատությունների ընտրություն և վերջնական ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում» միջոցառումը պետք է վերաձևակերպվեր իբրև «Մշակված չափանիշների համաձայն վերանորոգման, հիմնանորոգման և կառուցման ենթակա հաստատությունների ցանկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ», ինչը սահմանված ժամկետներում պարբերաբար իրականացվում է: Նշված փոփոխությունը միջոցառման վերաձևակերպման մասով չի իրականացվել՝ հաշվի առնելով այն ընդհանուր մոտեցումը, որ փոփոխությունները կարող են

				իրականացվել միայն առաջիկա վերջնաժամկետ ունեցող միջոցառումների նկատմամբ և չեն կարող վերաբերել արդեն վերջնաժամկետը լրացած միջոցառումներին: Միաժամանակ, կազմվել է նախագծային փուլում և շինարարության մեջ գտնվող (կառուցվող, հիմնանորոգվող և վերակառուցվող) հանրակրթական դպրոցների և նախադպրոցական ուսումնական հաստատություն-ների (մանկապարտեզ/նախա-կրթարան) մինչև 2026թ. ճանապարհային քարտեզ՝ ըստ տարիների, որում ներառված է 337 դպրոց և 521 մանկապարտեզ /նախակրթարան:
		3.5 Նոր չափորոշչին և առարկայական ծրագրերին համապատասխան՝ անհրաժեշտ գույքի և սարքավորումների ցանկի վերանայում և ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին և առարկայական ծրագրերին համապատասխան՝ անհրաժեշտ գույքի և սարքավորումների առկա ցանկը ուսումնասիրվել, լրամշակվել և հաստատվել է ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի օգոստոսի 26-ի N 21-Լ հրամանով և N 01/09.1/21032-2022 գրությամբ ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:	

		3.7 Նախադպրոցական այլընտրանքային ծախսարդյունա վետ մոդելների ներդրում	«Նախադպրոցական այլընտրանքային ծախսարդյունավետ մոդելների ներդրում» միջոցառման իրականացման շրջանակներում դրամաշնորհային մրցույթին հայտ է ներկայացրել 2 համայնք (Լոռու մարզի Սպիտակ համայնքի Նոր Խաչակապ և Լոռու Փամբակի համայնքներ): Ընթացքի մեջ են դրամաշնորհի հատկացման պայմանագրերի կնքման աշխատանքները:	
4.	Անցում համընդհանուր ներառման՝ հանրապետության բոլոր նախադպրոցական հաստատություններում	4.2 ՀՀ Սյունիքի, Լոռու, Տավուշի մարզերում և Երևան քաղաքում անցում համընդհանուր ներառման	ՀՀ կառավարության 2021 թ. հուլիսի 15-ի N 1169-Ն որոշմամբ հաստատվել է «Նախադպրոցական ուսումնական հաստատու-թյունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանելու մասին կարգը», համաձայն որի՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար հաստատության մեկ սանի հաշվարկով ֆինանսավորումը կիրականացվի սեպտեմբերի 1-ից: ԿԳՄՍ նախարարության կողմից մշակվել, հրապարակվել են իրազեկող նյութեր, տեսանյութեր, որոնց նպատակն է բարձրացնել նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների և նրանց ծնողների շրջանում իրազեկվածությունը հաշմանդամության՝ մարդու իրավունքների կամ սոցիալական մոդելի վերաբերյալ, և տրամադրել տեղեկություններ հաշմանդամություն ունեցող մարդկանց՝ որպես իրավունքի լիիրավ սուբյեկտի վերաբերյալ: «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մշակվել են «Կրթության և զարգացման առաձնահատուկ պայմանների կարիք ունեցող նախադպրոցա-կանների գնահատում» և «Կրթության և զարգացման առաձնահատուկ պայմանների կարիք ունեցող նախադպրոցականներին մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրում» թեմաներով վերապատրաստման մոդուլներ, մեթոդական նյութեր: Երևանում, ՀՀ Տավուշի, Լոռու և Սյունիքի մարզերում գործող տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից նախա-դպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին տրամա-դրվել է 357 մասնագիտական խորհրդատ-վություն: Իրականացվել է մասնագիտական կարողությունների հզորացմանն ուղղված վերապատրաստման դասընթացներ: Վերապատրաստվել է 1742	

			մանկավարժ: ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի հուլիսի 15-ի N 24-Ն հրամանով հաստատվել են «Երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշները»: ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 7-ի N 34-Ն հրամանով հաստատվել է «0-6 տարեկան երեխաների կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը»:	
5.	Ուսուցիչ-դաստիարակների աշխատանքային առաջխաղացման, շարունակական մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված մեխանիզմի ներդրում	5.1«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	ԿԳՄՍ նախարարության կողմից 2022 թվականի առաջին եռամսյակում մշակվել և սահմանված կարգով շրջանառվել է «Նախադպրոցական կրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Ներկայացված փոփոխությամբ կրթության պետական կառավարման լիազորված մարմնին է վերապահվել նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման կարգը սահմանելու լիազորություն: Նախագիծն Ազգային Ժողովի կողմից ընդունվել է 2022 թվականի մայիսի 4-ին:	Մշակվել և շահակից մարմիններ շրջանառվել է «Համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկա-վարժական աշխատողների տարակարգի շնորհման ու տարակարգ ստացած մանկավար-ժական աշխատողներին հավելա-վճար տրամադրելու, տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգերը սահմանելու մասին» ԿԳՄՍ նախարարի հրամանի նախագիծը: Նախագիծը կհաստատվի 2023 թ. փետրվարին:
		5.3 Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենների և	ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-ն որոշման մեջ տեղի ունեցած փոփոխությունների և լրացումների արդյունքում 35 316 000 ՀՀ դրամ հատկացվել է նախադպրոցական ուսումնական հաստատու-թյունների	

		մանկավարժական աշխատողների վերապատրաստումների մեկնարկ	ուսուցիչների վերապատրաստման համար, ինչի արդյունքում 2022 թվականին վերապատրաստվել է 1800 մանկավարժական աշխատող:	
6.	Համընդհանուր հասանելի և մատչելի սովորողակենտրոն հանրակրթական միջավայրի ստեղծում	6.3 Հանրակրթական դպրոցներում տարածաշրջանային լեզուների ուսուցման կազմակերպում	Միջոցառման կատարումն ապահովելու նպատակով ՀՀ բոլոր ուսումնական հաստատություններից հավաքագրվել է տեղեկատվություն առկա մասնագետների և տարածաշրջանային լեզուների ուսուցման կազմակերպման պատրաստակա-մության վերաբերյալ: Տարածաշրջանային 4 լեզուների առարկայական ծրագրերը հաստատվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով և տրամադրվել են պատրաստակամություն հայտնած ուսումնական հաստատություններին՝ նոր ուսումնական տարում գործընթացը կազմակերպելու համար: Միջոցառման կատարման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը 2022 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 01/09.1/22244-2022 գրությամբ ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: 2022 թ. պարսկերեն, վրացերեն, թուրքերեն, ադրբեջաներեն առարկայական ծրագրերը մշակվել և երաշխավորվել են գործածության, և 2022-2023 ուսումնական տարվանից տարածաշրջանային լեզուների ուսուցումը ՀՀ 25 ուսումնական հաստատությունում ներդրվել է որպես 3-րդ օտար լեզու կամ խմբակ /պարսկերեն՝ 7, վրացերեն՝ 3, թուրքերեն՝ 11, ադրբեջաներեն՝ 4 հաստատությունում/:	
		6.6 Սովորողների մոտ մեդիագրագիտության հմտությունների զարգացում	2021-2022 ուս. տարում ՀՀ Տավուշի մարզում փորձարկվել է հանրակրթության նոր չափորոշիչը, այդ թվում՝ հասարակագիտություն առարկայի չափորոշիչն ու ծրագիրը: Այն ամփոփվել, լրամշակվել ու 2022 թ. դեկտեմբերին ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: 2022 թվականին ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից իրականացվել է «Մեդիասպառող, թե՞ մեդիաստեղծող» մեդիագրագիտությանն ուղղված ծրագիրը: Նախագծերի ամփոփիչ միջոցառումը տեղի է ունեցել նոյեմբերի 30-ին, մասնակցել է 20 դպրոցի 100-120 սովորող:	

7.	Ուսուցիչների մասնագիտական շարունակական զարգացման և աշխատանքային առաջխաղացման տարբերակված քաղաքականություն՝ ելնելով ուսուցիչների տարբեր խմբերի կարիքներից	7.1 «ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1745-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ «ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1667-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի մարտի 5-ի N 24-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի օգոստոսի 15-ի N 1031-Ն հրամանում փոփո-	ԿԳՄՍ նախարարության կողմից մշակվել է «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի ձևավորման և գործունեության, տարակարգ ստացած ուսուցիչներին հավելավճար տրամադրելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1745-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» կառավարության որոշման նախագծը և 2022 թվականի օգոստոսի 8-ին N 01/09.1/19048-2022 գրությամբ ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: 2023 թվականի փետրվարի 9-ին ընդունվել է ՀՀ կառավարության «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի հերթական ատեստավորման կարգը հաստատելու և տարածքային հանձնաժողովների ստեղծման և գործունեության կարգը սահմանելու մասին» N 167-Ն որոշումը, որով նաև ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1745-Ն որոշումը: 2023 թվականի հունվարի 26-ին ընդունվել է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1667-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 98-Ն որոշումը, որով որոշման հավելվածը շարադրվել է նոր խմբագրությամբ: ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թվականի ապրիլի 11-ին հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի մարտի 5-ի N 24-ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» թիվ N 15-Ն հրամանը, որով հրամանի հավելվածը շարադրվել է նոր խմբագրությամբ:	

		խություններ կատարելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում		
8.	Կառուցել, հիմնանորոգել և վերանորոգել առնվազն 300 հանրակրթական ուսումնական հաստատություններ՝ապահովել դրանց ամբողջական հագեցումը անհրաժեշտ գույքով և սարքա-վորումներով	8.3 Նոր չափորոշչին և առարկայական ծրագրերին համապատասխան՝ անհրաժեշտ գույքի և սարքավորումների ցանկի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	2022 թվականի փետրվարի 16-ին ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել հանրակրթության պետական նոր չափորոշչին և առարկայական ծրագրերին համապատասխան՝ անհրաժեշտ գույքի և սարքավորումների ցանկերը:	
		8.4 Ցանկում ընդգրկված հաստատություններում շինարարական աշխատանքների իրականացում և անհրաժեշտ գույքով և սարքավորումներով հագեցվածության ապահովում	ՀՀ 2022 թ. պետական բյուջեով նախատեսված է և իրականացվում են թվով 82 դպրոցում շինարարական աշխատանքներ: Նախատեսված է նաև թվով 24 դպրոցի համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում: Պարբերաբար վարչապետի աշխատակազմ պաշոնական և աշխատանքային կարգով տեղեկատվություն է ներկայացվել դպրոցաշինության ծրագրի շինարարական աշխատանքների վերաբերյալ: ՀՀ կառավա-րության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի «Կրթություն» ենթաբաժնում նախատեսվող՝ մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների և 500 մանկապարտեզների ծրագրի շրջանակներում 2022 թվականի հոկտեմբերի 24-ի դրությամբ կազմվել է ճանապարհային քարտեզը, որն ամբողջությամբ ներառում է 2021-2026 թվականների ընթացքում ավարտված կամ ավարտվող՝ կառուցվող, հիմնանորոգվող և վերակառուցվող հանրակրթական դպրոցների և նախադպրոցական ուսումնական հաստատու-թյունների թվի և շինարարական աշխատանքների ամբողջական ավարտի /ներառյալ գույքային հագեցվածություն/վերաբերյալ տեղեկատվություն:	
9.	Հանրակրթական ուսումնական հաստատությունների	9.1 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու	«Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: 2022	

	կառավարման և ֆինանսավորման համակարգի արդյունավետության բարձրացում	մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	թվականի փետրվարի 9-ին Նախագիծը երկրորդ ընթերցմամբ ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից և ուժի մեջ է մտել 2022 թվականի մարտի 3-ից:	
		9.2 «ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման մշակում և ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	«ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել 2022 թ. օգոստոսի 8-ի թիվ 01/17.1/19084-2022թ. գրությամբ: ՀՀ կառավարության կողմից հաստատվել է 2022 թ. սեպտեմբերի 22-ի N 1481-Ն որոշմամբ:	
		9.3 «ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ «ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391- որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ «ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու	«ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագիծը ՀՀ Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել 2022 թ. օգոստոսի 8-ի N 01/09.1/19047-2022 գրությամբ: «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N **319-Ն** որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը նոյեմբերի 30-ի 01/09.1/30445-2022 գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: ՀՀ կառավարությունը 2023 թվականի փետրվարի 2-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 137-Ն որոշումը:	ԿԳՄՍ նախարարության կողմից մշակվել, սահմանված կարգով շրջանառվել և արդարադատու-թյան նախարարության պետական փորձագիտական եզրակացության են ներկայացվել «ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագիծը: 2022 թ. դեկտեմբերի 19-ի դրությամբ բոլոր կարգերի մասով կատարումն ապահովված է:

		մասին» որոշման նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ		
		9.4 Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատու-թյունների տնօրենների ատես-տավորման կարգը սահմանելու մասին որոշման նախագծի մշակում և ներկայա-ցում ՀՀ Վարչապետի աշխատակազմ «ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թ. մայիսի 18-ի N 395-Ն հրամանում փոփոխություններ և լրացում-ներ կատարելու մասին» ՀՀ ԿԳՄՍՆ հրամանի ընդունում	«ՀՀ ԿԳՄՍ նախարարը 2022 թ. նոյեմբերի 30-ին հաստատել է «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մայիսի 18-ի N 395-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասիՆ» N 67-Ն հրամանը	ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ. դեկտեմբերի 5-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենների ատեստավորման կարգը սահմանելու մասին» 76-Ն հրամանը հաստատվելու մասին տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ Կառավարություն:
		9.5 Հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմինների անդամների վերապատրաստումների մեկնարկ	Վերապատրաստումների մեկնարկը տրվել է 2022 թվականի օգոստոսի 15-ից ՀՀ բոլոր մարզերում: Հոկտեմբերի 31-ի դրությամբ ծրագրի 84 խմբերում վերապատրաստվել է հանրակրթական ուսումնական հաստատությունների խորհուրդների 3749 անդամ: Գործընթացն իրականացվել է ոչ միայն առկա, այլև հեռավար եղանակով:	
		9.6 Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների, տնօրենի տեղակալների	Վերապատրատումների մեկնարկը տրվել է 2022 թվականի մայիսի 16-ից ՀՀ բոլոր մարզերում: 106 խմբում վերապատրաստվել է թվով 3176 տնօրեն և փոխտնօրեն: Բոլոր խմբերը գործել են առկա, մեկ խումբ՝ Մեղրի համայնքում՝ հեռավար:	

		վերապատրաստումների մեկնարկ		
10.	ՀՀ բոլոր մարզերի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտներին	10.1 ՀՀ Լոռու մարզի հանրակրթական դպրոցների ընդգրկում «Կայուն դպրոցական սնունդ ծրագրում	ՀՀ Լոռու մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների տարրական դասարանների, ինչպես նաև նախակրթարանների երեխաները ապահովվել են սննդով: Տարվա ընթացքում վերապատրաստվել է 26 տնօրեն, 274 խոհարար, 403 ծնող, 40 հացթուխ և 26 հաշվապահ:	
		10.2 ՀՀ Արմավիրի մարզի հանրակրթական դպրոցների ընդգրկում «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրում	ՀՀ Արմավիրի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների տարրական դասարանների, ինչպես նաև նախակրթարան-ների շուրջ 14000 երեխաներ կապահովվեն սննդով: Տարվա ընթացքում վերապատրաստվել է 226 տնօրեն, 150 խոհարար, 919 ծնող և 4 հաշվապահ:	
		10.4 Վերապատրաստումների իրականացում՝ սննդի տրամադրման ծրագիրը պատշաճ իրականացնելու համար	ՀՀ Արմավիրի և Կոտայքի մարզերում իրականացվել են վերապատրաստումներ՝ դպրոցների անձնակազմերի համար, որոնք կունենան անհրաժեշտ կարողություններ և հմտություններ՝ ծրագիրն իրականացնելու համար: Իրականացվել են տնօրենների, խոհարարների, ծնողների վերապատրաստումներ: ՀՀ Կոտայքի մարզում վերապատրաստվել է 10 տնօրեն, 217 խոհարար, 24 աշակերտ և 10 հաշվապահ:	
11.	Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների և դրանցում իրականացվող ծրագրերի տեղաբաշխման ռացիոնալացում	11.1 «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն /ՆՄՄԿ/ իրականացնող ուսումնական հաստատությունների վերակազմակերպում	- ՀՀ կառավարության 2022 թ. օգոստոսի 14-ի թիվ 1086-Ա որոշմամբ հաստատվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը «Տավուշի Պատրիկ Տէվեճեան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամի վերակազմավորումը: Հաստատվել է հաստատության կանոնադրությունը: Հոկտեմբերի 26-ին ՀՀ կառավարության քննարկման է ներկայացվել ՀՀ վարչապետի «Տավուշի Պատրիկ Տէվէճեան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին» որոշման նախագիծը, շահագրգիռ մարմնից ստացված կարծիքները, տեղեկանքները և ամփոփաթերթը: - ՀՀ կառավարության 2022 թ. սեպտեմբերի 8-ի թիվ 1406-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ը «Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» հիմնադրամի վերակազմավորելու, «Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» հիմնադրամը «Հայաստանի ազգային	

			ագրարային համալսարան» հիմնադրամին միացման ձևով վերակազմակերպելու և ՀՀ կառավարության 2022թ. փետրվարի 17-ի թիվ 163-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին գործընթացը, որի արդյունքում նշված հաստատության Կանոնադրությունը հաստատվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 2022թ. սեպտեմբերի 13-ին: Ընթացքի մեջ է գտնվում ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 1406-Ն որոշման կետերի սահմանված կարգով կատարումը, հանձնման-ընդունման գործընթացը:	
		11.2 ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում ընդունելության տեղերի բաշխման մեթոդաբանության մշակում	Նախնական մասնագիտական (արհեստա-գործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ընդունե-լության տեղերի բաշխման մեթոդաբանության շրջանակում մշակվել են 2 հայեցակարգային փաստաթղթեր՝ ՀՀ-ում ՄԿՈՒ կարիքների գնահատում՝ ըստ ոլորտների և հեռանկարային միտումների, ըստ մարզերի և առանձին վարչատարածքային միավորների՝ մասնագիտական կրթության և ուսուցման մասնագիտությունների ցանկի վերանայում: Վերոնշյալ Հայեցակարգային փաստաթղթերը հիմք կհանդիսանան հետագայում ուսումնական հաստատությունների ընդունելության տեղերի բաշխման ընթացքում:	
		11.3 «ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում իրա-կանացվող ծրագրերի վերա-բաշխում՝ ըստ տարածքային և ոլորտային զարգացման գերակայությունների, ուսանողների թվաքանակի	2023-2024 ուսումնական տարվա ընդունելության պլանավորումը և ուսուցանվող մասնագիտությունների վերաբաշխումը ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում կատարվել է 2022 թ. իրականացված հետազոտության և մշակված «Հայաստանի Հանրապետությունում ՄԿՈՒ կարիքների գնահատում՝ ըստ ոլորտների և հեռանկարային միտումների» և «Ըստ մարզերի և առանձին վարչատարածքային միավորների՝ մասնագիտական կրթության և ուսուցման մասնագիտությունների ցանկի վերանայում» հայեցակարգային փաստաթղթերի հիման վրա: Գործնթացը ընթացքի մեջ է:	
13.	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և	13.2 «Նախնական մասնագի-տական (արհեստագործական) և միջին մասնագիտական	Նախատեսվում է ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում փորձարարական կարգով ներդնել աշխատանքի վրա հիմնված ուսուցման և դուալ ուսուցման համակարգ՝ տարեկան առնվազն 1 նոր մասնագիտության	

	միջին մասնագիտական կրթության ոլորտի զբաղունակության բարելավում	ուսումնական հաստատություններում փորձարարական կարգով աշխատանքի վրա հիմնված ուսուցման և դուալ ուսուցման համակարգի ներդրում	գծով՝ թվով 2 հաստատությունում: ՀՀ ԿԳՄՍ նախարարության և Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող «Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում» (ՄՀՋ ՄԿՈՒ) ծրագրի միջև համագործակցության շրջանակներում մեկնարկել են 2 ֆորմալ և 1 կարճաժամկետ դուալ ուսուցման ծրագրերի մշակման և 2022-2023 ուս. տարվանից ներդրման աշխատանք-ները, որի նպատակով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի ապրիլի 7-ի թիվ 580-Ա/2, հրամանով հաստատվել են 2022/2023 ուսումնական տարվանից փորձարարական դուալ ուսուցման համակարգ (երկակի) ներդրող միջին մասնագիտական ուսումնական հաստատություն-ներն ու մասնագիտությունները (Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջում կներդրվի «Լոգիստիկայի կազմակերպիչ» մասնագիտությամբ դուալ ուսուցման համակարգը, Լոռու տարածաշրջա-նային պետական քոլեջում՝ «Ռոբոտաշինություն» մասնագիտությամբ դուալ ուսուցման համակարգը): «Լոգիստիկայի կազմակերպիչ» և «Ռոբոտաշինություն» մասնագիտություններով դուալ ուսուցման ծրագիրը արդեն իսկ մշակվել և փորձաքննության է ենթարկվել Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգայի կենտրոնի կողմից, և ՀՀ ԿԳՄՍ նախարարի երաշխավորմամբ պետք է կիրառվի վերոնշյալ ուսումնական հաստատություններում: ՀՀ ԿԳՄՍ նախարարի 19.07.2022թ. 1331-Ա/2 և 06.09.2022թ. 1631-Ա/2 հրամաններով արդեն իսկ իրականացվել է ընդունելություն. ա/ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջում՝ «Լոգիստիկայի կազմակերպիչ» մասնագիտությամբ՝ 25 ուսանող: բ/ Լոռու տարածաշրջանային պետական քոլեջում՝ «Ռոբոտաշինություն» մասնագիտու-թյամբ՝ 12 ուսանող: Ամփոփվել է նաև լոգիստիկայի ոլորտի «Պահեստի կառավարիչ»	

			կարճաժամկետ ուսուցման ծրագիրը: Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ. մարտի թիվ 343-Ա/2 հրամանի՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող 4 մասնաճյուղերում 2022/2023 և 2023/2024 ուսումնական տարում փորձարարական դուալ ուսուցման համակարգ է ներդրվելու թվով 6 գյուղատնտեսական մասնագիտություններով:	
		13.3 «Կրթության մասին», «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքներում փոփոխություն կատարելու մասին » ՀՀ օրենքի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	Ստեղծվել են անհրաժեշտ օրենսդրական հիմքեր՝ աշխատանքի վրա հիմնված և դուալ ուսուցման ողջ ՆՄՄԿ համակարգում ներդրման համար ՀՀ Ազգային ժողովում 2022 թ. նոյեմբերի 15-ին առաջին ընթերցմամբ ընդունվել է ՆՄԿՈՒ օրենքի նախագիծը: Օրենքի նախագծի փոփոխությունները և լրացումները հիմնականում առնչվում են լիազորող նորմերին, որի ընդունումից հետո հնարավորություն կընձեռնվի մշակել կամ վերանայել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ոլորտը կարգավորող իրավական ակտերը: Նախարարության կողմից մշակվել է. «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» («Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքը՝ ամբողջությամբ լրամշակվել և անվանվել է «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենք (այսուհետ՝ ՄԿՈՒ), և «Կրթության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությ-ունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Առևտրի և ծառայությունների մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը: Նախագծերի փաթեթով առաջարկվող փոփոխու-թյունները ներառում են հետևյալ առանցքային ուղղությունները. -ՄԿՈՒ օրենքում օգտագործվող հասկացությունների և դրանց սահմանումների ներդաշնակեցում: -Աշխատանքի վրա հիմնված ուսումնառության (դուալ) համակարգի կատարելագործում: -Կրթության կառավարման ու կազմակերպման համագործակցային մոդելի ներդրում՝ սոցիալական գործընկերության պատասխանատվություն:	

			-ՄԿՈՒ ոլորտում անցում ՈԱՇ-ին, ՈՈՇ-ին և կրեդիտային համակարգի: -ՄԿՈՒ հաստատությունների կառավարման բարելավում: -Մասնագիտական կրթական ծրագրերին դրանց ներկայացվող ընդհանուր պահանջների վերանայում: - Մասնագիտական կրթական ծրագրի իրականացման իրավունքի և որակավորումների լիցենզավորում: - ՄԿՈՒ-ի ֆինանսավորման համակարգի վերանայում և ձեռնարկատիրական գործունեության խթանում: -ՄՈՒՀ-երի վարչական և մանկավարժական անձնակազմի համալրման, կատարելագործման, գնահատման, խրախուսման, պատասխանատվության և կարիերայի ապահովման մեխանիզմների բարեփոխում՝ նախատեսելով վերապատրաստում, ատեստավորում, տարակարգի ու կոչումների շնորհում: -ՄԿՈՒ համակարգի ուսանողների և ունկնդիրների իրավունքներն ու պարտականությունների կարգավորում: -Մասնագիտական կրթություն և ուսուցում ստանալու հավասար հնարավորությունների ապահովում՝ կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման և ներառման միջոցով: Ամփոփման փուլում է գտնվում շահագրգիռ պետական և ոչ պետական կառույցներից, ինչպես նաև հանրային քննարկման արդյունքում ներկայացված առաջարկությունները և դիտարկումները: Առաջիկայում փաթեթը սահմանված կարգով կներկայացվի ՀՀ վարչապետի աշխատակազմ:	
14.	ՆՄՄԿ հաստատություն-ների մարդկային ռեսուրսների հզորացում	14.1 ՆՄՄԿ իրականացնող հաստատությունների վարչական, կառավարման խորհուրդների անդամների, տարբեր աշխատան-քային խմբերում ներգրավված ճյուղային և ոլորտային միությունների ներկայացու-ցիչների, մանկավարժական	-Վերապատրաստվել է ՄԿՈՒ պետական կրթական չափորոշիչ մշակող 27 փորձագետ, 914 մանկավարժական աշխատող, 91 ՄԿՈՒ հաստատությունների ղեկավարներ: Իրականացվել նաև ՄԿՈՒ հաստատությունների կառավարման խորհրդի 40 անդամների վերապատրաստում: Վերապատրաստվածների ընդհանուր թիվը կազմել է 1072 մարդ:	

		անձնակազմի վերապատրաստում		
15.	ՆՄՄԿ գրավչության, մատչելիության, բարձրացում, ներառականության ապահովում	15.1 «Ըստ առաջնահերթության՝ վերակառուցման և վերանորոգման ենթակա ՆՄՄԿ հաստատությունների քարտեզագրում	ԿԳՄՍՆ կողմից ըստ առաջնահերթության իրականացվել է վերակառուցման և վերանորոգման ենթակա ՆՄՄԿ հաստատութ-յունների նախնական քարտեզագրում. 2021-2024 թվականների պետական բյուջեի միջոցներով նախատեսվող կապիտալ ծախսերում ներառվել և ներկայացվել են ներքոհիշյալ ուսումնական հաստատությունները. 1.Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ, 2.Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջ 3.«Նոր Գեղիի ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ 4.«Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ 5.Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ապարանի մասնաճյուղ 6.«Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական 7.«Ստեփանավանի պրոֆ. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ 8.«Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ 9.«Նոյեմբերյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ 10.«Երևանի հ. 8 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ 11.«Երևանի Ա. Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջ» ՊՈԱԿ 12.Երևանի զարդարվեստի արհեստագործական պետական ուսումնարան 13.«Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական պետական քոլեջ» ՊՈԱԿ 14.«Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ» ՊՈԱԿ:	

			Վերոնշյալ ուսումնական հաստատությունների համար, բացառությամբ՝ «Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի, արդեն իսկ մշակվել և սահմանված կարգով հաստատվել են վերակառուցման, հիմնանորոգման նախագծանախահաշվային պաստաթղթերը: Առաջնային են համարվել ուսումնական հաստատությունների տանիքների, պատուհանների, ջեռուցման համակարգերի ապահովման և սանհանգույցների վերակառուցման և վերանորոգման աշխատանքները, որի նպատակով կազմվել է ցանկ՝ և հունիսի 6-ին ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Քննարկման փուլում է գտնվում Արմավիրի, Տավուշի, Շիրակի մարզերում և Երևան քաղաքում գործող ուսումնական հաստատությունների վերակազմակերպման հարցերը: Վերոնշյալ մարզերում վերակազմակերպվող ուսումնական հաստատությունների վերջնական ցանկը ամփոփելուց հետո նախարարության կողմից կմշակվեն նաև ըստ առաջնահերթության վերանորոգման և հիմնանորոգման ենթական նոր ուսումնական հաստատությունների ցանկը:	
16	Բարձրագույն կրթության համակարգում արդյունավետ, թա-փանցիկ, կատարո-ղականի (KPI) և վերջնարդյունքների վրա հիմնված կառավարման համակարգի ստեղծում. անցում կատարողականի (KPI) և ծրագրային արդյունքների ֆինանսավորում, բարձրագույն կրթության ֆինան-սավորման նոր մեխանիզմների ներդրում	16.1 «Բուհերի գործունեության կատարողականի արդյունքային ցուցանիշները (KPI) և ծրագրային արդյունքների ֆինանսավորման մեխանիզմները հաստատելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում	2022 թվականի նոյեմբերի 23-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 79-Լ հրամանով հաստատվել է «Բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության կատարողականի արդյունքային ցուցանիշները (KPI) և ծրագրային արդյունքներով ֆինանսավորման մեխանիզմները, դրանց կիրառման մեթոդական ուղեցույցը:	

17.	Բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունելության սկզբունքների և մեխանիզմների վերանայում և ներառականության ընդլայնում	17.2 ՀՀ կառավարության 2006 թվականի N 1183-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու մասին» կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	«ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի № 1183-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2021 թվականի սեպտեմբերի 30-ի № 01/11-1/22129-2021 գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 28-ի № 1752-Ն որոշմամբ ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի № 1183-Ն որոշման մեջ կատարվել է փոփոխություններ:	
18.	Տարածաշրջանային լեզուներով կրթության ապահովում	18.1 ՀՀ ԿԳ նախարարի 2015 թվականի հուլիսի 3-ի «Հա-յաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտա-կան կրթության մասնագիտու-թյունների կրթական ծրագ-րերը հաստատելու մասին» N 647--Ա/Ք հրամանում լրացում-ներ կատարելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում	2022 թ. սեպտեմբերի 30-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 1766-Ա/2 հրամանով հաստատվել են «Վրացագիտություն» և «Ադրբեջանագիտություն» մագիստրոսական կրթական ծրագրերը և ներառվել են «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերը հաստատելու մասին» N 647-Ա/Ք հրամանի հավելված N 2-ում՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոս) մասնագիտությունների կրթական ծրագրերի ցանկում:	
19.	Կրթական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի վերանայում՝ ուղղելով	19.1 Որակավորումների ազ-գային շրջանակի (ՈԱՇ) պահանջներին համապատաս	2022 թ. նոյեմբերի 29-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամաններով՝ հաստատվել են N 2193-Ա/2 «Քիմիա», N 2194-Ա/2 «Աշխարհագրություն», N 2195-Ա/2 «Երկրաբանություն», N 2196-Ա/2 «Սերվիս» և N2197-Ա/2 «Փիլիսոփայություն» ոլորտային որակավորումների բնութագրերը: ՀՀ ԿԳՄՍ նախարարի	

	դեպի ուսումնառության վերջնարդյունքներ՝ որակավորումների ազգային շրջանակի պահանջներին համապատասխան	խան որակավորումների ոլորտային շրջանակների (ՈՈՇ) մշակում և հաստատում ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով	20.12.2022թ N 2397-Ա/2 հրամանով հաստատվել է «Մաթեմատիկա» ոլորտային որակավորումների շրջանակի բնութագրերը:	
		19.2 Կրթական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի վերանայում՝ որակավորումների ոլորտային շրջանակներից բխող կրթական վերջնարդյունքների հիմքով	Բուհերում վերանայման ընթացքում են իրականացվող կրթական ծրագրերը՝ համապատասխանեցնելով դրանք հաստատված որակավորումների ոլորտային շրջանակների բնութագրերին:	
24.	Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) անդամակցությամբ պայմանավորված բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումներ	24.1 ՀՀ ներկայացուցիչների մասնակցություն Բոլոնիայի հետամուտ խմբի և աշխատանքային խմբերի հանդիպումներին	ԵԲԿՏ-ի բարեփոխումների իրականացման նպատակով՝ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված Բոլոնիայի գործընթացի հետա-մուտ և աշխատանքային խմբերի՝ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչներն ապահովել են վերոնշյալ գործընթացով պայմանավորված աշխատանքային հանդիպումներին մասնակցությունը:	

Գիտություն

26.	Գիտության ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործում	26.1 «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում գիտական կադրերի տարակարգը և չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ		Նախագիծը նախատեսվում էր ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո, որում ներառված է համապատասխան իրավական ակտի ընդունման լիազորող նորմը, քանի որ վերջինս սահմանված չէ ոլորտը կարգավորող «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքում: Հաշվի առնելով, որ մինչ այժմ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագիծը գտնվում է շրջանառության փուլում, և ելնելով ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի միջոցառումների կատարման տրամաբանությունից՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2022 թ. դեկտեմբերի 2-ի N 02/11/35663-2022 գրությանը

				համապատասխան՝ ՀՀ գիտության կոմիտեի կողմից մշակվել և սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել ««Գիտական և գիտատեխնիկա-կան գործունության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվելու 2023 թվականի հունվարի 30-ին՝ համաձայն նշված հանձնարարականի: Ելնելով վերոգրյալից՝ ««Գիտական և գիտատեխնիկական գործունե-ության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի անցումային դրույթներում նշված միջոցառման համար նախատեսված ենթաօրենսդրական իրավական ակտի ընդունման համար ժամկետ սահմանվել է մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ը:

		26.4 «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, նպատակային-ծրագրային և թեմատիկ (դրամաշնորհային) ֆինանսավորման նոր կարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ		Նախագիծը նախատեսվում էր ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո, որում ներառված է համապատասխան իրավական ակտի ընդունման լիազորող նորմը, քանի որ վերջինս սահմանված չէ ոլորտը կարգավորող «Գիտական և գիտատեխնիկական գործունեու-թյան մասին» ՀՀ օրենքում: Հաշվի առնելով, որ մինչ այժմ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագիծը գտնվում է շրջանառության փուլում, և ելնելով ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրի միջոցա-ռումների կատարման տրամաբա-նությունից՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 2-ի N 02/11/35663-2022 գրությանը

				համապատասխան՝ ՀՀ գիտության կոմիտեի կողմից մշակվել և սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել ««Գիտական և գիտատեխնիկա-կան գործունության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվելու 2023 թվականի հունվարի 30-ին՝ համաձայն նշված հանձնարարականի: Ելնելով վերոգրյալից՝ ««Գիտական և գիտատեխնիկա-կան գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի անցումային դրույթներում նշված միջոցառման համար նախատեսված ենթաօրենսդրա-կան իրավական ակտի ընդունման համար ժամկետ սահմանվել է մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ը:

		26.5 «Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2022-2026 թվականների ռազմավարական ծրագիրը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի նոյեմբերի 29-ի N 01/9.1.1/30379-2022 գրությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել տեղեկատվություն այն մասին, որ Նախագծի հիմնական մասը ներկայում պատրաստ է, սակայն այն առավել ընդգրկուն դարձնելու նպատակով գոյություն ունի ավելի վերգտնվող ռազմավարական ուղղորդիչների անհրաժեշ-տություն, քանի որ ոլորտին առնչվող քաղաքականությունը դեռևս խիստ բազմավեկտորային է, ինչպես նաև Նախագծում ներառված չէ Ակադեմիական քաղաքի ստեղծման համատեքստում գիտության ոլորտում իրականացվելիք գործընթացների նկարագիրը, քանի որ Ակադեմիական քաղաքի նախնական կոնցեպտը դեռևս գտնվում է մշակման փուլում, իսկ դրա շրջանակներում բուհերի միավորման հետ մեկտեղ ներառված են նաև ոլորտային գիտահետազոտական ինստիտուտների գիտական ներուժի համաժամանակյա տեղափոխման (միևնույն տարածքում մեկտեղման) և գիտական հանրույթին ուսումնական գործընթացներում ներգրավելու հարցերը՝ նախատեսելով նաև համապատասխան ենթակառուցվածքների ստեղծում:	Նախագիծը նախատեսվում էր ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո, որում ներառված է համապատասխան իրավական ակտի ընդունման լիազորող նորմը, քանի որ վերջինս սահմանված չէ ոլորտը կարգավորող «Գիտական և գիտատեխնիկական գործունե-ության մասին» ՀՀ օրենքում: Հաշվի առնելով, որ մինչ այժմ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագիծը գտնվում է շրջանառության փուլում, և ելնելով ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի միջոցառումների կատարման տրամաբանությունից՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 2-ի N 02/11/35663-2022 գրությանը

				համապատաս-խան՝ ՀՀ գիտության կոմիտեի կողմից մշակվել և սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել ««Գիտական և գիտատեխնիկական գործունե-ության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվելու 2023 թվականի հունվարի 30-ին՝ համաձայն նշված հանձնարարականի: Ելնելով վերոգրյալից՝ ««Գիտական և գիտատեխնիկա-կան գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի անցումային դրույթներում նշված միջոցառման համար նախատեսված ենթա-օրենսդրական իրավական ակտի ընդունման համար ժամկետ սահմանվել է մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ը:

27.	Մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացում	27.1 Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինում ու համատեղ օգտագործման գիտական սարքավորումների կենտրոնների ստեղծում	Գիտական ենթակառուցվածքների զարգացվա-ծության, ինչպես նաև մրցունակ գիտական հետազոտություններ իրականացնելու նպատակով 2022 թվականին կազմակերպվել է գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկա-կան բազայի արդիականացման համար մրցույթ, որի արդյունքում ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի նոյեմբերի 3-ի N 2016-Ա/2 հրամանի համաձայն՝ 15 գիտական կազմակերպություն-ներին նյութատեխնիկական բազայի արդիականացման համար տրամադրվել է աննախադեպ շատ՝ 2,932,527.0 հազ. դրամ (թվով 28 հայտ): 2021 թվականին նույն մրցույթի շրջանակներում տրամադրվել է 1,354,297.3 հազ. դրամ, իսկ դրանից առաջ կազմակերպված մրցույթներում ամենամեծ հատկացումը շուրջ 300,000.0 հազ. դրամ է եղել: Մրցույթը շարունակական է, և այդ նպատակի համար ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 12-ի N 2348-Ա/2 հրամանի համաձայն՝ հայտարարվել է «Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորում-ներով վերազինելու նպատակով գիտական սարքերի/սարքավորումների գնման հայտերի ընտրության» մրցույթ: Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է ՀՀ գիտության կոմիտեի՝ support@scs.am էլեկտրոնային հասցեի միջոցով մինչև 2023 թվականի փետրվարի 24-ը ներառյալ:	
		27.2 Գիտական կենտրոնների վերանորոգում	Մրցույթը հնարավոր է հայտարարել միայն հետազոտությունների համար ավելի նպաստավոր միջավայրի ստեղծման, ինչպես նաև մարդկային և ֆիզիկական ռեսուրսի արդյունավետ օգտագործման նպատակով հարակից բնագավառներում հետազոտություն իրականացնող գիտական կազմակերպու-թյունների միավորումից և համատեղ օգտագործման գիտական սարքավորումների կենտրոնների ստեղծումից հետո: Ներկայում նախապատրաստման փուլում են ՀՀ ԳԱԱ Հր. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի և ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտների ու ՀՀ ԳԱԱ Գ. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների և ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտների միավորման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագծերը:	
		27.6 Գիտական և գիտատեխնիկական	Միջազգային գործընկերության աշխարհագրու-թյան ընդլայնման, ինչպես նաև համաշխարհային նշանակության հետազոտությունների իրականացման	

		բնագավառում միջպետական կամ միջգերատեսչական պայմանագրերի և համաձայնագրերի կնքում	նպատակով ՀՀ գիտության կոմիտեի կողմից իրականացվել են մի շարք համագործակցային աշխատանքներ: 1. Հոկտեմբերի 20-ին ՀՀ գիտության կոմիտեի և Վրաստանի Շոթա Ռուսթավելիի անվան գիտության ազգային հիմնադրամի միջև ստորագրվել է «Գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության մասին» մտադրությունների հուշագիր, որի շրջանակներում նախատեսվում են իրականացնել համատեղ հետազոտական ծրագրեր, գիտական անձնակազմի, հատկապես՝ երիտասարդ գիտնականների փոխանակման ծրագրեր, գիտագործնական հանդիպումներ, սեմինարներ, գիտաժողովներ, գիտական ենթակառուցվածք-ների փոխադարձ օգտագործում և այլն: Վերոգրյալ միջազգային գիտական համագործ-ակցության շրջանակներում 2023 թվականին հայտարարվելու է հայ-վրացական մրցույթ: 2. ՀՀ գիտության կոմիտեի և ԻՀ ազգային հետազոտությունների խորհրդի միջև 2022 թվականի ապրիլին ստորագրված «Գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակ-ցության մասին» համագործակցության ծրագրի շրջանակներում ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի ապրիլի 21-ի N 717-Ա/2 հրամանի համաձայն՝ կազմակերպվել է հայ-իտալական համատեղ թեմաների աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ-ԻՀ ԱՀԽ-2023» մրցույթ: Մրցույթի շրջանակ-ներում տրամադրվելու են 12 կամ 24 ամիս տևողությամբ դրամաշնորհներ՝ մինչև 10 անձից բաղկացած գիտական խմբերի: Հայաստանյան գիտական խմբի տարեկան ֆինանսավորման առավելագույն ծավալը կազմում է 2, 500.0 հազ. դրամ: ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի հունվարի 24-ի N 117-Ա/2 հրամանի համաձայն ֆինանսավորման է երաշխավորվել 8 գիտական թեմա: 3. Աշխատանքներ են տարվել ՀՀ գիտության կոմիտեի և Ֆրանսիայի Գիտական հետազոտու-թյունների ազգային կենտրոնի (CNRS) միջև համագործակցությունը վերսկսելու և համատեղ ծրագրեր իրականացնելու ուղղությամբ:	

			4. Ուրուգվայի կողմից ցուցաբերվել է հետաքրքրություն գիտական համագործակ-ցության մասով, ներկայում ընթանում են նախնական բանակցություններ: 5. Շարունակվում են միջազգային դրամաշնորհային պարբերական 7 ծրագրերը 5 երկրների (Ռուսաստան, Բելառուս, Իտալիա, Գերմանիա, Չինաստան) և Եվրասիական ասոցիացիայի հետ, առկա են պարտավորու-թյուններ և մրցույթներ, որոնք պետք է վերաթողարկվեն 2023 թվականին: 6. Նոյեմբերի 10-ին Գիտության և տեխնոլոգիաների ոլորտում եվրոպական համագործակցության (COST ասոցիացիա) բարձրագույն խորհուրդը Հայաստանին շնորհել է COST ասոցիացիայի լիիրավ անդամի կարգավիճակ, ինչը նշանակում է, որ հայաստանյան գիտնականները և նորարարները կարող են լինել COST գործողության հիմնական նախաձեռնող և համակարգող, ի հավելումն արդեն իսկ սկսված COST գործողություններին անդամակցելուն, ինչպես որ նախկինում էր: COST գործողությունները միջառարկայական գիտահետազոտական ցանցեր են, որոնք միավորում են հետազոտողներին և նորարարներին՝ 4 տարվա ընթացքում իրենց նախընտրած թեման ուսումնասիրելու նպատակով: Ներկայում ընդհանուր թվով 44 հայաստանյան մասնակիցներ մասնակցում են 29 ընթացիկ COST գործողությունների: EU TAIEX ծրագիր Էստոնիայի Հանրապետութ-յան հետ: TAIEX ծրագրով ՀՀ գիտության կոմիտեի երեք աշխատակիցներ կհամագործակցեն Էստոնիայի Գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի համապատասխան աշխատակից-ների հետ՝ փորձի փոխանակման համար:	
		27.7 Եվրոպական շրջանակային ծրագրերի հետ ասոցացման և շրջանակային ծրագրերում Հայաստանի ակտիվ մասնակցության խթանմանը միտված ծրագրերի իրականացում	Վերագործարկվել է «Գիտական և նորարարա-կան գործընկերությանն աջակցման կենտրոն» հիմնադրամը, որի շրջանակներում առաջին փուլով՝ 2021 թվականին Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) և Հիմնադրամի կողմից համատեղ հայտարարված մրցույթի արդյունքում խորհրդատվական աջակցություն ստանալու համար ընտրվել են 9 գիտական նախագծեր, որոնցից 5-ը ներկայացվել են «Հորիզոն Եվրոպա» ծրագրի շրջանակում հայտարարված մրցույթներին, որոնցից 2-ը դարձել են «Հորիզոն Եվրոպա» «Marie Skłodowska-Curie» ծրագրի	

			շահառուներ, իսկ նույն համագործակցության երկրորդ փուլով (2022 թվական օգոստոս) հայտարարված մրցույթի արդյունքում «Հորիզոն Եվրոպա» ծրագրի 5 պոտենցիալ հայտատուներ ստացել են միջազգային փորձագետների կողմից անցկացվող 4-ամսյա տևողությամբ ուսուցողական նիստերի և անհատական խորհրդատվությունների մասնակցության հնարավորություն: Կենտրոնի աշխատակիցները մասնակցել են 80-ից ավել առցանց և առկա միջոցառումների: «Գիտական և նորարարական գործընկերությանն աջակցման կենտրոն» հիմնադրամի մասնակցությամբ «Հորիզոն Եվրոպա» ծրագրին է ներկայացվել 5 նախագծի առաջարկ /հաստատվել է մեկը/: «Հորիզոն Եվրոպա» ծրագրի շրջանակներում 2021-2022 թվականների ընթացքում ՀՀ պատկանող կազմակերպությունների կողմից ներգրավվել է 2,729,236.25 եվրո դրամաշնոր-հային միջոցներ այն դեպքում, երբ նախորդ Հորիզոն 2020 ծրագրի ողջ տևողության ընթացքում 2014-2020 ՀՀ կազմակերպություն-ները ներգրավել են ընդամենը 4.196.514.36 եվրո դրամաշնորհային միջոցներ:	
28.	Գիտության ոլորտում աշխատողների որակավորման բարձրացում և երիտասարդ կադրերի ներգրավում	28.1 Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրերի իրականացում	Գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման, գիտական և գիտատեխնիկական ոլորտում գիտության հասարակական վարկի բարձրացմանը նպաստելու, ինչպես նաև գիտական կադրերի բարեկեցության ապահով-ման ու նրանց սոցիալական խնդիրների լուծման, ինչպես նաև արտերկրի լավագույն ասպիրանտական կրթության կազմակերպման նպատակով ՀՀ գիտության կոմիտեի կողմից կազմակերպվել է «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր-2022» մրցույթը, որի շրջանակներում ներկայացվել է 31 հայտ: ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 26-ի N 1746-Ա/2 հրամանով ամփոփվել են մրցույթի արդյունքները և ֆինանսավորման են երաշխավորվել 26 ասպիրանտների և հայցորդների հետազոտական ծրագրեր, որոնք հնարավորություն կունենան մինչև ասպիրանտական կրթության ավարտը ստանալ հավելյալ ֆինանսավորում՝ որոշակի որակական չափանիշներ հաղթահարելու պայմաններով:	

		28.2 Հետդոկտորական հետազոտությունների ծրագրերի իրականացում	Նորավարտ հետազոտողների համար ինքնուրույն աշխատանքի և առավել առաջատար խնդիրների վրա աշխատելու փորձառության ձևավորման նպատակով՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի նոյեմբերի 23-ի N 2164-Ա/2 հրամանի համաձայն՝ հայտարարվել է Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական կադրերի (PhD, PostDoc) վերապատրաստման ծրագրերի հայտերի ընտրության մրցույթը: Մրցույթն իրականացվում է երկու փուլով: Առաջին փուլի շրջանակներում ներկայացվել է 8 հայտ: Երկրորդ փուլի հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2023 թվականի հուլիսի 28-ը: - Երիտասարդ գիտնականների վերապատրաստ-ման (PostDoc) ծրագիր՝ նախատեսելով յուրաքանչյուր տարի 6-36 ամսով 12 երիտասարդ գիտնականների վերապատրաստման (PostDoc) կազմակերպում աշխարհի լավագույն գիտական կազմակերպություններում՝ ՀՀ գիտության և տեխնիկայի գերակա ուղղություններին համապատասխան: Մինչև 2024 թվականը 48 բարձր որակավորում ունեցող գիտնականներ: Միջազգային գիտատեղեկատվական շտեմարան-ներում (Web of Science կամ Scopus) հրատարակումների աճ (քանակ), երիտասարդ և միջին տարիքի գիտնականների թվի ավելացում (մարդ), - Նպատակային ասպիրանտական ուսուցման (PHD abroad) ծրագիր՝ նախատեսելով յուրաքանչյուր տարի 6-36 ամսով 24 ասպիրանտների (PHD) նպատակային ուսուցման կազմակերպում աշխարհի լավագույն գիտական կազմակերպություններում՝ ՀՀ գիտության և տեխնիկայի գերակա ուղղություններին համապատասխան: Միջազգային գիտատեղեկա-տվական շտեմարաններում (Web of Science կամ Scopus) հրատարակումների աճ (քանակ), երիտասարդ գիտնականների թվի ավելացում (մարդ):	
29.	Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում	29.1 Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձերի	Իրականացվել է գիտական և գիտատեխնիկա-կան գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձերի նորմավորման գործընթացը՝ համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի «ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 747-Լ որոշմամբ ներդրված 2022-2025 թթ. բազային	

		նորմավորման գործընթացի իրականացում	ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի նվազագույն պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցների աղյուսակի: 2022-2025 թթ. հասցնելով համապատասխանաբար հետևյալ ցուցանիշների՝ *լաբորանտ կամ ճարտարագետ*՝ 102.5 հազ. դրամ, 110.0 հազ. դրամ, 120.0 հազ. դրամ և 138.3 հազ. դրամ, *ավագ լաբորանտ կամ ավագ ճարտարագետ*՝ 110.0 հազ. դրամ, 130.0 հազ. դրամ, 156.0 հազ. դրամ և 179.0 հազ. դրամ, *կրտսեր գիտաշխատող*՝120.0 հազ. դրամ, 150.0 հազ. դրամ, 180.0 հազ. դրամ և 210.0 հազ. դրամ, *գիտաշխատող*՝150.0 հազ. դրամ, 200.0 հազ. դրամ, 230.0 հազ. դրամ և 276.0 հազ. դրամ, *ավագ գիտաշխատող*՝200.0 հազ. դրամ, 250.0 հազ. դրամ, 300.0 հազ. դրամ և 343.0 հազ. դրամ, *առաջատար գիտաշխատող*՝250.0 հազ. դրամ, 350.0 հազ. դրամ, 420.0 հազ. դրամ և 443.8 հազ. դրամ, *գլխավոր գիտաշխատող*՝ 367.1 հազ. դրամ, 450.0 հազ. դրամ, 500.0 հազ. դրամ և 552.9 հազ. դրամ, գիտական խմբի ղեկավար՝ 230.0 հազ. դրամ, 280.0 հազ. դրամ, 350.0 հազ. դրամ և 410.0 հազ. դրամ, *գիտական ստորաբաժանման ղեկավար*՝350.0 հազ. դրամ, 400.0 հազ. դրամ, 450.0 հազ. դրամ և 477.2 հազ. դրամ:	
		29.3 «Գիտական կազմակերպությունների կատարողականի գնահատման մեթոդաբանությունը և կատարողականի հիման վրա միջոցառումների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և		Նախագիծը նախատեսվում էր ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո, որում ներառված է համապատասխան իրավական ակտի ընդունման

		ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ		լիազորող նորմը, քանի որ վերջինս սահմանված չէ ոլորտը կարգավորող «Գիտական և գիտատեխնիկական գործունեու-թյան մասին» ՀՀ օրենքում: Հաշվի առնելով, որ մինչ այժմ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագիծը գտնվում է շրջանառության փուլում, և ելնելով ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի միջոցառումների կատարման տրամաբանությունից՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2022 թ. դեկտեմբերի 2-ի N 02/11/35663-2022 գրությանը համապատասխան՝ ՀՀ գիտության կոմիտեի կողմից մշակվել և սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել ««Գիտական և գիտատեխնիկա-կան գործունության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը,

				որը ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվելու 2023 թվականի հունվարի 30-ին՝ համաձայն նշված հանձնարարականի: Ելնելով վերոգրյալից՝ ««Գիտական և գիտատեխնիկական գործունեու-թյան մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի անցումային դրույթներում նշված միջոցառման համար նախատեսված ենթաօրենս-դրական իրավական ակտի ընդունման համար ժամկետ սահմանվել է մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ը:
		29.4 Վերաինտեգրման կամ հեռավար ղեկավարվող լաբորատորիաների ստեղծում	Հեռավար լաբորատորիաների ստեղծման, Սփյուռքի գիտական ներուժի ներգրավման, ՀՀ-ում իրականացվող հետազոտությունների մակարդակի բարձրացման նպատակով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի հունիսի 17-ի N 1153-Ա/2 հրամանի համաձայն՝ կազմակերպվել է «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր» **(ARPI)** մրցույթ, որի արդյունքում յուրաքանչյուր ծրագրին 5 տարվա համար հատկացվում է մինչև 152.5 մլն ՀՀ դրամ (շուրջ 350 հազար եվրո), որի մեջ մտնում է նաև որոշակի բաժին լաբորատոր (աշխատանքային) միջավայրի բարեկարգման համար: Մրցույթի շրջանակներում 14 երկրներից ներկայացվել է 52 հայտ: Մրցույթի արդյունքներով ֆինանսավորման են երաշխավորվել 11 երկրներից 18 գիտնականների ներկայացրած թեմաներ (գիտնականներից՝ 9-ը հայազգի	

			չեն, իսկ ՀՀ-ում հիմնադրվող ստորաբաժանումների ղեկավար-ներից 9-ը կանայք են): Օտարերկրյա պետություններում բնակվող հայ մասնագետների ներգրավման, հայաստանյան գիտնականների շարժունության ապահովան նպատակով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ. հունիսի 1-ի N 1049-Ա/2 հրամանի համաձայն՝ կազմակերպվել է «ՀՀ գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիր» միջազգային մրցույթ, որի արդյունքում ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ. սեպտեմբերի 26-ի N 1751-Ա/2 հրամանի համաձայն՝ ֆինանսավորման են երաշխավորվել Սփյուռքից Հայաստան տեղափոխված 4 և ՌԴ-ից Հայաստան տեղափոխված 1 գիտնականների գիտական թեմաներ՝ 60 ամիս (3+2 տարի) տևողությամբ, 175 մլն ՀՀ դրամ ծավալով ողջ տևողության համար:	
		29.5 Գիտության ոլորտի կառավարման միասնական էլեկտրոնային հարթակի ներդրում	2022 թվականից սկսել է գործել առցանց ռեժիմով բոլոր մակարդակներում՝ անհատ հետազոտողից մինչև գիտական կազմակերպություն, արդյունավետության մշտադիտարկման համար կայք: Կայքի աշխատանքը նախապես ստուգվել է գիտական կազմակերպությունների կողմից: Կայքի միջոցով ընդունվել են գիտական կազմակերպությունների 2021 թվականի տարեկան հաշվետվությունները, ինչպես նաև 2023 թվականի պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերի հայտերը: Պետական բյուջեից ֆինանսավորվող յուրաքանչյուր գիտական կազմակերպություն ունի անհատական էջ, որտեղ լրացվում են գիտական և վարչական կառուցվածքի և աշխատակիցների վերաբերյալ տվյալները: Անհատական էջում կա գիտական ենթակառուցվածքների (լաբորատորիա, բաժին, խումբ) նկարագրություն, գիտական ուղղություն-ներ և նպատակներ: Բացի անձնակազմից նախատեսվում է հավաքագրել գիտական կազմակերպությունների նյութատեխնիկական բազայի (սարքեր, սարքավորումներ, նյութեր), ինչպես նաև անշարժ գույքի վերաբերյալ տվյալներ:	

		29.7 Երկակի նշանակության հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրի իրականացում	Երկրի տնտեսության պահանջներից բխող, ինչպես նաև երկակի նշանակության բարձր տեխնոլոգիական մրցունակ արտադրանքի ստեղծմանն ուղղված հետազոտությունների խթանման նպատակով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 20-ի N 1694-Ա/2 հրամանի համաձայն ՀՀ գիտության կոմիտեի կողմից կազմակերպվել է Երկակի նշանա-կության ծրագրերի աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ 12 կամ 24 ամիս տևողությամբ: Մրցույթի շրջա-նակներում ներկայացվել է 34 հայտ: ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի փետրվարի 3-ի N 177-Ա/2 հրամանի համաձայն ֆինանսավորման են երաշխավորվել 6 գիտական թեմաներ:	
		29.8 Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական նախագծերի աջակցություն	Նոր տեխնոլոգիաների մշակման և տեխնո-լոգիաների պատրաստիության մակարդակի բարձրացման, արտադրության մեջ գիտական հետազոտությունների արդյունքների կիրառման ու գիտական և գիտատեխնիկական գործունեության սոցիալ-տնտեսական ազդեցու-թյան աճի, բնական, բժշկական, գյուղատնտե-սական գիտությունների և ճարտարա-գիտության բնագավառում կիրառելի մշակումների իրականացման, ինչպես նաև գիտության և բիզնեսի միջև կապերի ձևավորման նպատակով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 17-ի N 1896-Ա/2 հրամանի համաձայն ՀՀ գիտության կոմիտեի կողմից կազմակերպվել է Փորձարարական մշակումների նախագծերի (Experimental development projects) հայտերի ընտրության մրցույթ, որը փոխարինելու է նախորդ տարիներին ՀՀ գիտության կոմիտեի կազմակերպած Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված մրցույթներին՝ այն հիմնական տարբերությամբ, որ նախագծերը ավարտին պետք է ունենան որոշակի տեխնոլոգիաների պատրաստիության մակար-դակ (ՏՊՄ, TRL): Մրցույթի շրջանակներում առցանց (on-line) ռեժիմով՝ ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի մրցույթների հայտերի և հաշվետվությունների ընդունման համակարգով (https://grants.scs.am) ներկայացվել է 11 հայտ: Մրցույթի ամփոփումն ու ֆինանսավորումը նախատեսված է 2023 թվականին:	

30.	Ապահովել Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման և կոչումների շնորհման արդյունավետ համակարգ	30.1 ՀՀ կառավարության 09.07.2001թ. N 615 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի փոփոխությունների նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	«Հայաստանի Հանրապետությունում կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի N 177-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգը»՝ նոր խմբագրությամբ:	
		30.2 «Հայաստանի Հանրապետու-թյան գիտական աստիճաններ և կոչումներ շնորհելու մասնագիտու-թյունների անվանացանկերը հաստատելու և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի հունիսի 15-ի N 13-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում	ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի հունվարի 18-ի N 03-Ն հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճաններ և կոչումներ շնորհելու մասնագիտությունների և անվանացանկերը հաստատելու և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի հունիսի 15-ի N 13-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հրամանը:	
		30.3 Հայաստանի Հանրապետությունում հրատարակվող գիտական պարբերականներին առաջադրվող պայմանների վերամշակում և հաստատում ԲՈԿ-ի նախագահի հրամանով	ՀՀ ԲՈԿ-ի նախագահի 2022 թվականի մարտի 9-ի N 61-Ա հրամանով հաստատվել է «Ատենախոսությունների հիմնական արդյունքները և դրույթները հրատարակելու համար Բարձրագույն որակավորման կոմիտեի համար ընդունելի պարբերական գիտական հրատարակություններին ներկայացվող չափանիշները հաստատելու և Բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 86-Ա հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» հրամանը:	

Մշակույթ

33.	Հայ մշակույթի հանրահռչակում, հանրային լայն մասնակցության ապահովում մշակութային կյանքին	33.1 Թանգարաններում և գրադարաններում կրթական ծրագրերի իրականացում	ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայության 21 թանգարաններում և 12 գրադարաններում իրականացվել են 2554 կրթական ծրագրեր (թանգարան՝ 2320, գրադարան՝ 234), որոնց մասնակցել են տարբեր տարիքային և սոցիալական խմբերի՝ 34267 երեխա՝ այդ թվում 970 սահմանափակ կարողություններով շահառուներ:	
		33.2 Հուշարձանների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում	*Իրականացվել են* • 25 կրթական ծրագրեր, • 6 տեղեկատվական արշավ, • 2 արտաքին գովազդի հարթակ, • 5 գիտաժողով	
		33.3 Հայաստանում միջազգային և հանրապետական փառատոների և մրցույթների, ստեղծագործական նախագծերի, ցուցահանդեսների իրականացում (այդ թվում՝ Դաշտադեմի ամրոցում «Զարկ ֆեստ» (Յարխուշտա), ազգային փոքրամասնությունների մասնակցությամբ փառատոների իրականացում)	*Տարվա ընթացքում իրականացվել են.* ➢ **Կերպարվեստի 4 ծրագիր** *1.* «Գրքարվեստ և կալիգրաֆիա 2» ծրագիրը Ծրագիրը միտված է ձեռագրի և գրքարվեստի ուսումնասիրմանը, ար-ժևորմանն ու հանրայնաց-մանը: Նախագիծը ներառել է ցուցահանդեսներ, տոնավաճառ, դասախոսություն և վարպետաց դասեր: *2.* «Մեկ կտավ մեկ գաղափար» Ծրագիրը նախատեսված է ՀՀ պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ հայ կերպարվեստի ոլորտի երիտասարդ և ավագ սերնդի ստեղծագործողների համար: Իրականցվել է ՀՀ Տավուշի մարզի գյուղ Գետահովիտում: *3.* «Հերման Նորդերմեր. Ռեմինիսցենցիա» Իրականացվել է հոլանդացի անվանի փորագրանկարիչ, վիմագրության վարպետ Հերման Նորդերմեերի առաջին անհատական ցուցահանդեսը Հայաստանում և վարպետության դասերը: 4. Կազմակերպվել է ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ, Մկրտիչ Սեդրակյանի ռետրոսպեկտիվ ցուցահանդես՝ նվիրված նկարչի 100-ամյա հոբելյանին: ➢ **Երաժշտարվեստի և պարարվեստի ծրագրեր** Իրականացվել է 48 միջոցառում, այդ թվում. - Երևանյան միջազգային երաժշտական 14-րդ փառատոնը՝ նվիրված Օհան Դուրյանի ծննդյան 100-ամյակին,	

			- «Արմենիա» միջազգային երաժշտական փառատոնը, - Հայաստանի կոմպոզիտորների միության 90-ամյակին նվիրված հոբելյանական փառատոնը, - «SumMeet» Հայաստանում ժամանակակից պարի միջազգային ամառային 2-րդ փառատոնը, - Պենդերեցկու անվան ժամանակակից դասականների փառատոնը, - Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոնը, -Եղիշե Չարենցի 125-ամյակին նվիրված գրական երաժշտական երեկոն, -«Սիմֆոնիկ Մանսուրյան» խորագրով բարեգործական համերգը, -«Սաղսարա» երաժշտական, հետազոտական-վավերագրական նախագիծը, -«Երաժշտությունը սահմանին», - «Հայահավաք», -«Խորանաշատ 800» -«Ակունքներ» նախագծերը, ➢ **Թատերարվեստի ծրագրեր** իրականացվել է 7 միջոցառում, այդ թվում՝ - «ԱՐՄՄՈՆՈ» միջազգային թատերական փառատոնը, - «ՀԱՅ ՖԵՍՏ» կատարողական արվեստի միջազգային փառատոնը, - Երևանի Շեքսպիրյան 16-րդ միջազգային թատերական փառատոնը, - Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնի և Սոս Սարգսյանի անվան «Համազգային» թատրոնների համատեղ նախագիծը՝ «Հրաշագործը» ներկայացումը, - Օպերային թատրոնի թատերաշրջանի բացում Վանաձորում - Հ. Թումանյանի «Շունն ու կատուն» բեմադրության առաջնախաղ և Վանաձորի տիկնիկային թատրոնի հիմնադրման 30-ամյակին նվիրված միջոցառումը: -«Վիյ» ներկայացման առաջնախաղը: ➢ **Կրթամշակութային ծրագրեր** Իրականացվել է 7 միջոցառում, մասնավորապես. - «Վարպետության դաս.Մեկնարկ» կրթամշակու-թային ծրագիր: Վարպետության դասերին մասնակցել են 9-18 տարեկան 41 պատանի	

			երաժիշտներ՝ Երևանի և ՀՀ մարզերի երաժշտա-կան ուսումնական հաս-տատություններից: - «Դպրոցականի ֆիլհարմոնիա», - «Աշխատարաններ» միջազգային փորձի փոխանակմամբ, - «Բիմ Բոմ» կրթամշակութային հեռուստանա-խագիծը, - «Արվեստն իմ հույզերով» ծրագիրը, - «Կինոն՝ Ուսուցիչ» ծրագիրը, -«Կարպետագործության և բատիկայի դասընթացներ» կրթամշակու-թային ծրագիրը: ➢ **Կինոարվեստի ծրագրեր** Իրականացվել է 2 միջոցառում 1.«Յուրի Երզնկյանի» 100-ամյա հոբելյանին նվիրված միջոցառում Երզնկյան ընտանիքի ծննդավայր՝ Հաղպատում կազմակերպվել է ռեժիսորի տարբեր տարիների ֆիլմերի ցուցապաստառների ցուցա-դրություն, «Յուրի Երզնկյան» գրքի շնորհանդեսը, «Եթե գաք մեզ մոտ Հաղպատ» վավերագրական և «Այս կանաչ կարմիր աշխարհը», Փառքի օղակներ», «Խաթաբալա» գեղարվեստական ֆիլմերի ցուցադրությունը: գեղարվեստական ֆիլմերը: 2. «Ֆրունզիկ Մկրտչյան. Հնդկաստանը հիշում է ինձ» վավերագրական ֆիլմի ցուցադրություն: Ցուցադրությունը կազմակերպվել է Քաջարան քաղաքում Հայաստանի և Վրաստանի, Հայաստանի և Հնդկաստանի միջև դիվա-նագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյա հոբելյաննե-րի շրջանակներում:	
		33.5 Համայնքներում ոչ նյութական մշակութային ժառանգության իրազեկման և կրթամշակութային ծրագրերի իրականացում	*Տարվա ընթացքում իրականացվել է 6 ծրագիր. -«Նշխարներ Շիրակի բանավոր մշակույթից»* ծրագիրն իրականացվել է ՀՀ Շիրակի մարզի 3 խոշորացված համայնքների 13 բնակավայրերում: Արդյունքում՝ բանահավաքները հարցազրույցներ են ունեցել են 20-94 տարեկան 80 տեղաբնակների հետ, պատրաստվել են 5 մեդիա-կոնտենտ, 3 գիտական հոդվածներ և ազգագրական նյութերի հավաքման ուղեցույց-ձեռնարկ, նկարահանվել են 2 տեսաֆիլմեր, իրականացվել են 2 ավանդական մշակութային միջոցառումներ: *-«Գյումրի.*	1.

			վարպետաց քաղաք» խորագրով արհեստների փառատոն, որին մասնակցել են ՀՀ 9 մարզերի 25 համայնքներից 65 վարպետներ՝ ցուցադրելով ժողովրդական արհեստների տարբեր ուղղություններ: Ունեցել է շուրջ 3000 այցելու: -«*Արար. ազգային մշակույթի պահպանումը, տարածումը, զարգացումն ու հանրահռչակումը Հայաստանի Հանրապետության մարզերում»* շարունակական ծրագիրն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ, «Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան» ՊՈԱԿ-ի և «Արար» հայ ազգային արվեստի պահպանման կենտրոն» ՀԿ համագործակցությամբ: Ներկայում ՀՀ 8 մարզերի 40 համայնքներում գործում են 24 կենտրոններ, ուր 18 տեղաբնակ մասնագետներ շուրջ 900 տարբեր տարիքի երեխաների ու պատանիների արհեստագործական հմտություններ են ուսուցանում: -*«Ավանդական խաղերը և տոները՝ ոչ նյութական մշակութային ժառանգություն»* ծրագիրն իրականացվել է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Կանայք այսօր հանուն առաջընթացի» ՀԿ նախաձեռնությամբ: Նկարահանվել են ավանդական խաղեր ներկայացնող 10 րոպե տևողությամբ 10 տեսանյութեր, որոնք հեռարձակվել են 3 հեռուստաընկերությունների կայքերում և առցանց հարթակներում: - «Ափդեյթ 3» ծրագիրն ամփոփել է նախորդ երկու փուլերի ընթացքում «Սևան երիտասարդական ակումբ» ՀԿ երիտասարդների՝ Սևանի առափնյա շրջանների Ակունք, Ծովագյուղ, Դդմաշեն համայնքներից հավաքած, գրանցած և նոտայագրած երգային բանահյուսության նմուշները: Պատրաստվել են այդ նմուշների 3 ձայնագրություններ և 3 տեսահոլովակներ՝ նպաստելով շուրջ 100 պատանիների և երիտասարդների տեղական ժառանգության իրազեկմանը և դրա նկատմամբ ստեղծագործա-կան մոտեցման խթանմանը: -*«Գուպար» ազգային-ավանդական խաղերի մրցույթ»* ծրագիրն իրականացվել է Լեռնային Ղարաբաղ Ասկերանի շրջանի Քյաթուկ համայնքում «Դիզակ Արտ» մշակութային ՀԿ նախաձեռնությամբ, որի ընթացքում հոկտեմբերին կազմակերպվել է ազգային-ավանդական խաղերի համապետական մրցույթ: Ծրագրին մասնակցել են Լեռնային	

			Ղարաբաղ տարբեր համայնքների 18-35 տարեկան 60 պատանիներ և երիտասարդներ:	
34.	Մշակութային ժառանգության թվայնացում, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ընդլայնում	34.1 Ոչ նյութական մշակութային ժառանգության շտեմարանի համալրում	«*ՀՀ Ոչ նյութական մշակութային ժառանգության» շտեմարան (www.int-heritage.am)* մուտքագրվել են 15 հոդվածներ երեք լեզվով, 50 նորություններ, 15 տեսանյութեր և 15 հայտարարություններ: Շտեմարանի «Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների գույքագրման և ցանկերի մասին» դաշտը լրամշակվել է, ավելացվել են 2 նոր հավելվածների հղումներ, որոնց ձևաչափերը լրացնելու միջոցով ՀՀ համայնքները, պետական կառավարման և տեղական ինքնակառավար-ման մարմինները, հասարակական կազմակեր-պություններն ու հիմնադրամները, գիտական, մշակութային և կրթական կազմակերպություն-ները, ստեղծագործական միությունները և ոչ նյութական մշակութային ժառանգության անհատ կրողները կարող են դիմել պետական լիազոր մարմին՝ իրենց ժառանգությունը գրանցելու համար (https://int-heritage.am/vonmjj-arjeqneri-guyqagrman-masin/):	
		34.2 Գրադարաններում էլեկտրոնային սպասարկման ծրագրի ներդնում «ԿՈՀԱ» (Հայաստանյան գրադարանների էլեկտրոնային համահավաք գրացուցակ) ծրագրի շրջանակում	«ԿՈՀԱ» ծրագիրը ներդրվել է Շիրակի մարզային և Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարաններում: Էլեկտրոնային ընթացակարգով սպասարկվել է 6507 ընթերցող, տրամադրվել է 23334 միավոր գիրք:	
		34.3 Թանգարանային հավաքածուների թվայնացում	2022 թվականին թվայնացվել և մշակութային արժեքների «Գանձարան» էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան է մուտքագրվել 33.585 թանգարանային առարկայի վերաբերյալ տվյալներ և հաստատվել 32.350 թանգարանային առարկա:	

35.	Օտարերկրյա պետություններում հայկական գրավոր ժառանգության պահպանություն և հանրահռչակում	35.1 Արտերկրում հիմնված հայկական կրթական և մշա-կութային կենտրոններում, համայնքային նշանակության, ինչպես նաև անհատական գրադարաններում, պահպանված հայկական գրավոր ժառանգության Հայաստան տեղափոխման «Լքյալ գրադարաններ» ծրագիր	ՀՀ ԱԳՆ-ից ստացված տեղեկատվության համաձայն՝ -*Ամերիկայի Միացյալ Նահանգներում* ճշտվում է Ռուսաստանի Դաշնությունում գտնվող հայկական գաղթօջախներում տարիների ընթացքում կուտակված հայերեն տպագիր և ձեռագիր գրավոր ժառանգության վայրերի և դրանց սեփականատերերի տվյալները: ԱՄՆ-ում ՀՀ դեսպանության կողմից աշխատանքներ են տարվում գույքագրելու տարիների ընթացքում ԱՄՆ-ում կուտակված հայերեն տպագիր ու ձեռագիր գրավոր ժառանգությունը: -*Կանադայում* ՀՀ դեսպանությունը աշխատանքներ է տանում համայնքային կառույցների, կրթական հաստատությունների, ինչպես նաև անհատների հետ՝ Հայաստան տեղափոխման ենթական գրական ժառանգության առկայությունը պարզելու և ցուցակագրելու ուղղությամբ: -*Քուվեյթում* ՀՀ դեսպանությունը նախնական պայմանավորվածություն է ձեռք բերել Քուվեյթի Հայ ազգային վարժարանի տնօրինության հետ հնարավորինս սեղմ ժամկետներում ցուցակագրել համայնքային և անհատական գրադարաններում առկա արժեքավոր գրականությունը, որոնք առաջնահերթ անհրաժեշտ է տեղափոխել Հայաստան: Աշխատանքները ընթացքի մեջ են: -*Բրազիլիայում* ՀՀ դեսպանությունը նախնական պայմանավորվածություն է ձեռք բերել Սան Պաուլոյի Սուրբ Գևորգ հայ առաքելական եկեղեցու և ՍԱՄԱ հայկական ակումբի հետ ցուցակագրելու համայնքային և անհատական գրադարաններում առկա գրքերը, որոնք առաջնահերթ անհրաժեշտ է տեղափոխել Հայաստան: - *ԴՀ-ում* ՀՀ դեսպանությունը Գերմանիայի Հայ ակադեմիականների միությանն օժանդակություն է ցուցաբերել գերմանացի գիտնական դր. Ռիխարդ Ալբրեխտի՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված թվով մոտ 100 արժեքավոր գրքերը և արխիվային փաստաթղթերը հավաքագրելու գործում: Գրքերը գտնվում են Գերմանիայում, նախատեսվում է գրքերի Հայաստան տեղափոխումը: -Ճշտվում են *Բելգիայի* հայկական գաղթօջախում հնարավոր առկա հայերեն տպագիր և ձեռագիր գրավոր ժառանգության սեփականատերերի տվյալները:	

			-*Շվեդիայում ՀՀ* դեսպանությունը դիմել է հավատարմագրման երկրների համայնքային կառույցներին՝ հայցելով վերջիններիս տրամադրության տակ հայկական գրավոր ժառանգության առկայության վերաբերյալ տեղեկատվություն: -*Միացյալ Թագավորությունում ՀՀ* դեսպանու-թյունը կազմակերպել է տարբեր աճուրդներից հայ համայնքի ներկայացուցիչների կողմից ձեռք բերված հայկական արժեքավոր նյութերի, ձեռագրերի տեղափոխումը Մատենադարան (ավելի քան 3 արկղ): *ՀՀ* դեսպանությունը «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամին է հանձնել Իտալիայի Օրիոլո Ռոմանոյի մենաստանի վերանորոգման աշխատանքների ժամանակ հայտնաբերված Հայոց ցեղասպանության վերաբերյալ իտալերեն լեզվով արխիվային նյութեր: Դրանք ներառում են ֆրանցիսկյան վանական, երանելի Սալվատորե Լիլիի ձեռագրերը: -*Իտալիայում ՀՀ* դեսպանությունն իր գրադարանից ԱԳՆ գրադարանին է փոխանցել Հայոց ցեղասպանության և Իտալիայում հայ համայնքի թեմաներով գրքեր: Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ Նիկոլայ Հովհաննիսյանի՝ իտալարեն թարգմանությամբ գրքերը նվիրաբերվել են Իտալիայի հանրային գրադարաններին և քաղաքական ու հասարակական գործիչներին: Եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյակի առթիվ Իտալիայում *ՀՀ* դեսպանության ջանքերով հրապարակվել են. 1.Չարենցի ստեղծագործությունների երկլեզու /հայերեն-իտալերեն/ հատորը՝ իտալերեն թարգմանությամբ: 2. Գրող, լրագրող Լետիցիա Լեոնարդիի հեղինակած Եղիշե Չարենցի առաջին իտալերեն կենսագրությունը «Եղիշե Չարենց. մի բանաստեղծի անհանգիստ կյանքը»: Իտալիայի Պեսկարա քաղաքում վերատպվել է է հայ գրող, բանաստեղծ, գրականագետ և հասարակական գործիչ Արշակ Չոբանյանի կողմից հավաքագրված «Հայկական ժողովրդական երգեր» ժողովածուն: Իտալիայի Աբրուցցո շրջանում կայացած հայկական մշակույթին նվիրված փառատոնի արդյունքներով տպագրվել ՝ «Stills of Peace and everyday life»	

			կատալոգը, որի մեջ ամփոփվել է շուրջ 6 ամսվա ընթացքում իրականացված միջոցառումների, ցուցահանդեսների և ֆիլմերի ցուցադրությունների մասին տեղեկատվությունը: - *Լեհաստանում* Հայաստանի դեսպանությունն աշխատանքներ է իրականացնում համայնքային նշանակության, ինչպես նաև անհատական գրադարաններում պահպանված և Հայաստան տեղափոխման ենթական գրավոր ժառանգության առկայությունը պարզելու ուղղությամբ: - *Ռումինիայում* ՀՀ դեսպանությունը դիմել է Ռումինահայոց միությանը, թեմին և Ռումինիայի հայ կաթոլիկ համայնքի առաքելական առաջնորդին՝ կուտակած հայերեն տպագիր և ձեռագիր գրավոր ժառանգության, դրա ներկայիս վիճակի և Հայաստան տեղափոխելու հնարավորության մասին տեղեկատվություն տրամադրելու խնդրանքով: Հայ կաթոլիկ համայնքի առաջնորդը իր պատրաստակամու-թյունն է հայտնել քննարկելու հարցը՝ միևնույն ժամանակ տեղեկացնելով, որ գրքերի զգալի մասն ունի վերականգնման կարիք: -*Ֆրանսիայում* հայկական գրադարաններում պահվող հայկական գրավոր ժառանգությունն ակտիվորեն ծառայում է կրթական, ակադեմիական և հանրային ընթերցանության նպատակներին, ուստի այն չի կարող բնորոշվել որպես «Լքյալ գրադարաններ»: Անհատական գրադարանները կամ անհատ անձանց պատկանող հայկական գրական ժառանգության նմուշները՝ որպես նվիրաբերված ժառանգություն, Հայաստանին փոխանցելու ցանկության դեպքում ՀՀ դեսպանությունը հանձն կառնի օժանդակել դրանք պատշաճ կերպով ՀՀ տեղափոխելու գործընթացին: -*Արգենտինայում և Ուրուգվայում* պահպանված հայկական գրավոր ժառանգությունը գտնվում է համայնքային կառույցների գործող գրադարաններում, որոնք շարունակում են ծառայել իրենց նպատակին: - Տարվա ընթացքում քննարկումներ են տարվել *Թեհրանի* «Արտակ Մանուկյան» թանգարանի հետ, որտեղ պահվում են թվով 24 հնատիպ հայալեզու ձեռագրեր: 2022թ. նշված թանգարանում ուսումնասիրություններ են իրականացրել «Մատենադարան» թանգարան-ինստիտուտի	

			աշխատակիցները: Աշխատանքներ են տարվում նշված ձեռագրերի ՀՀ տեղափոխման հնարավորությունները՝ հաշվի առնելով տվյալ բնագավառում ԻԻՀ օրենսդրությունը: - ՀՀ դեսպանության կողմից իրականացվում է գրքերի գրավոր հաշվառում *Թբիլիսիի* Թումանյանի անվան տուն-գիտական, մշակութային կենտրոնում: *Ախալցխայի շրջանի* Ծուղրուտ գյուղում Սապոնյանների ընտանիքում պահվում է հայերեն մագաղաթյա ձեռագիր-մատյան Ծուղրուտի Ավետարանը, որը թվագրվում է 974թ.:	
36.	Ստեղծագործական կարողությունների լիարժեք արտահայտման և իրացման համար բարենպաստ միջավայրի ապահովում	36.1 «Ոչ պետական մամուլի հրատարակում» ծրագիր	ՀՀ ԿԳՄՍ նախարարությունն աջակցել է Հայաստանում ազգային փոքրամասնություն-ների լեզուներով լույս տեսնող 9, գրական 11, մշակութային 11 տպագիր և էլեկտրոնային պարբերականների աշխատանքներին:	
		36.2 «Աջակցություն գրականության հանրահռչակմանը, գրական ծրագրերին և գրքերի միջազգային ցուցահանդեսներին մասնակցությանը» ծրագիր	Հոկտեմբերի 18-24-ը Հայաստանը առանձին տաղավարով մասնակցել է Ֆրանկֆուրտի գրքի միջազգային ցուցահանդեսին: Ցուցահանդեսին մասնակցում էին 95 երկրներից 4000 ցուցադրողներ, 93000 ոլորտային մասնագետ-ներ, 87000 այցելուներ, 6400 լրագրողներ և մեդիայի ոլորտի ներկայացուցիչներ: Ֆրանկֆուրտի հայկական տաղավարում, ինչպես նաև մյուս ազգային տաղավարների և օտարերկրյա հրատարակչու-թյունների ներկայացուցիչներին ներկայացվեց «Հայ գրականությունը թարգմանություններում» ծրագիրը: Հայկական պատվիրակության կազմում Ֆրանկֆուրտում էին «Արի», «Առաջին» գրական գործակալությունները, «Անտարես», «Բուկինիստ», «Նյումեգ», «ԵՊՀ», «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին», «Վերնատուն» հրատարակ-չությունները, «Զանգակ» գրատունը: ՀՀ ԿԳՄՄՆ աջակցում է արտերկրի այն հրատարակչություններին, որոնք ցանկանում են իրենց երկրում օտար լեզվով հրատարակել հայ դասական և ժամանակակից գրականություն: - Սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 2-ը տեղի ունեցավ Գրքի երևանյան փառատոնը, որի ընթացքում ավելի քան 10 տեղամասերում տեղի ունեցան 60-ից ավելի միջոցառումներ: Փառատոնին մասնակցեցին մի քանի	

			տասնյակ գրողներ Հայաստանից, Ֆրանսիայից, Իտալիայից, Ռուսաստանից, Վրաստանից, Սլովենիայից, Կիպրոսից, 35-ից ավելի հրատարակչություններ, գրավաճառներ և մշակութային կազմակերպություններ: Երեք օրերի ընթացքում փառատոնն ունեցավ շուրջ 15 000 այցելու:	
		36.3 Մշակույթի տարբեր ոլորտներում ստեղծագործական ծրագրերի աջակցություն՝ դրամաշնորհների հատկացման բաց-մրցութային համակարգի միջոցով, ինչպես նաև դեբյուտային ստեղծագործական ծրագրերի և արվեստի փորձարարական և նորարարական ձևերի խրախուսում»	Ստեղծագործական ծրագրերի աջակցություն ցուցաբերելու համար մրցույթներ են իրականացվել 8 անվանակարգերով՝ *«Թատերավեստի նախագծեր»* անվանակարգում իրականացվել է թվով 11 նախագիծ, այդ թվում՝ - Լևոն Շանթ «Ուրիշի համար» ստեղծագործության թատերական ընթերցանության կազմակերպումը, - Ուիլյամ Շեքսպիր «Ռոմեո և Ջուլիետ» բեմադրությունը, - Ուիլյամ Գիբսոն «Սպիտակ վարդեր, վարդագույն փղեր» բեմադրությունը, -Անտուան դը Սենտ-Էքզյուպերի «Փոքրիկ իշխանը» բեմադրությունը, - «Հայ Ֆեստ» 20-րդ կատարողական արվեստների միջազգային փառատոնի անցկացումը, - Ուիլյամ Գիբսոն «Հրաշագործը» բեմադրությունը, - «Արմմոնո» մշակութային միջազգային փառատոնի անցկացումը, -Հովհ. Թումանյանի «Քեֆ անողին քեֆ չի պակսիլ» բեմադրությունը, - Գ.Հարությունյանի «Սյունեցի Գոռը» բեմադրութ-յունը, - Թատերական պաստառների միջազգային մրցույթ փառատոնը, -«Թատերակետեր» նախագիծը: -*«Երաժշտարվեստի նախագծեր»* անվանակարգում ընտրվել և իրականացվել է թվով 17 նախագիծ՝ «Երաժշտությունը սահմանին», «Խաչ-մերուկներ. Ժամանակակից երաժշտության օրեր Հայաստանում» միջազգային 5-րդ փառատոն, «Հայ երաժշտության տեսաձայանգրում», «Արամ Խաչատրյանի անվան միջազգային 18-րդ մրցույթ	

			(թավջութակահարների)», «Հայ կոմպոզիտորական արվեստի 13-րդ փառատոն», «Երգեհոնային կամուրջ», «Ռոմանոս Մելիքյանը և ռոմանսի ճանապարհը», «Հայաստանի կոմպոզիտորների միության 90-այակին նվիրված հոբելյանական փառատոն», «Կուս» լարային քառյակի համերգի և վարպետության դասեր, «Երիտասարդ կոմպոզիտորների խմբերգային ստեղծագործությունների մրցույթ-փառատոն», «Երգեհոնային երաժշտության միջազգային փառատոն», «50-ամյա «Հորովել» հոբելյանական համերգ-երեկո, «Ակունքներ», «Սաղսարա» երաժշտական, հետազոտական-վավերագրական նախագիծ, «Ֆրանսիան մեր բարեկամն է»: *«Պարարվեստի նախագծեր»* անվանակարգում ընտրվել և իրականացվել է 2 նախագիծ՝ «Ժողովրդական պարի ակունքներում» և «SumMeet Հայաստանում ժամանակակից պարի միջազգային ամառային 2-րդ փառատոն»: *«Կերպարվեստի նախագծեր»* անվանակարգում ընտրվել և իրականացվել է 6 նախագիծ՝ 44-օրյա մասնակից արվեստագետ-ների «Խրամատային Գեղարվեստ» խորագրով ցուցահանդես, - «Համատեղ հայացք Սամցխե-Ջավախեթիին» հայ-վրացական առաջին պլեներ, -«Հայկական հեքիաթների հանրահռչակումը կերպարվեստի միջոցով», -«Գրքարվեստ և կալիգրաֆիա 2», -«Մեկ կտավ մեկ գաղափար», -«Լուսանկարչություն-նոր սերունդ, նոր հայացք»: *«Ներառական նախագծեր ժամանակակից արվեստի ոլորտում»* անվանակարգում իրականացվել է 8 նախագիծ՝ -«Hope For Dreams երաժշտական ներառական նախագիծ», -«Ձեռք ձեռքի տված», -«Միասին ստեղծում ենք», -«Խոսող կտավներ», - Ազգամետ, -«Կինոդպրոց առանց սահմանների»,	

			--«Կողք-կողքի» փառատոն, -«Ֆրեսկո» արդի արվեստի և հոգևոր ֆիլմերի միջազգային փառատոն, *«Մշակութային հեռուստանախագծեր»* անվանակարգում իրականացվել է 4 նախագիծ՝ «Արվեստանոց», «Բացահայտումներ», «Ժառանգություն» և «Ինքնություն»: *«Ստեղծագործական կրթական ծրագրեր և նախագծեր»* անվանակարգում իրականացվել է 11 նախագիծ՝ -«Կարպետագործության և բատիկայի դասընթացներ», -«Օնլայն, ոչ ֆորմալ կրթական հարթակ», -«Երգով ու սիրով» երգչախմբային փառատոն Սյունիքում և Լեռնային Ղարաբաղում, - «Էդվարդ Միրզոյանի անվան պատանի կոմպոզիտորների հանրապետական ամենամյա մրցույթ», - «Արվեստն իմ հույզերով, -«Նոր անուններ» պատանի երաժիշտ-կատարողների 11-րդ միջազգային փառատոն, -«Բիմ Բոմ հեռուստանախագծի առաջին եթերաշրջան», -«Աշխատարաններ՝ միջազգային փորձի փոխանակմամբ», -«Կինոն՝ ուսուցիչ», «Զարդագիր» կրթամշակութային ծրագիր, «ԴասԱրվեստ»: *«Կինոարվեստի նախագծեր»* անվանակարգում ընտրվել և իրականացվել է 5 նախագիծ՝ -«Հայկական Ֆիլմ Ֆորում 2022», -«19-րդ Ոսկե ծիրան միջազգային կինոփառատոն», -«Ծիրանի ծառ» Ուջանի վավերագրական ֆիլմերի 8-րդ միջազգային փառատոն», -«ՌեԱնիմանիա» միջազգային անիմացիոն կինոյի և պատկերապատման արվեստի փառատոն», -«Մէկ կադր կարճ ֆիլմերի միջազգային փառատոն»: Իբրև **դեբյուտային ծրագիր** 2022թ. մեկնարկել են՝ • Չայկովսկու «Մարդուկ-Զարդուկ» բալետային ներկայացման հյուրախաղերը Գյումրիում	

			• Ս. Սարգսյանի անվան համազգային թատրոնի հյուրախաղերը ՀՀ Գեղարքունիքի մարզում • Պատանի հանդիսատեսի թատրոնի հյուրախաղերը Վանաձորում • Պատանի հանդիսատեսի թատրոնի հյուրախաղերը Գյումրիում • «Երգեհոնային կամուրջ» նախագիծը • Կուս» լարային քառյակի համերգին և վարպետության դասերի իրականացումը • «Իմ սիմֆոնիկ» երիտասարդական կրթամշակութային ծրագիրը • Պենդերեցկու անվան ժամանակակից դասականների փառատոնը, • Գ. Մահարու ստեղծագործությունների հիման վրա «Գիշեր» մինիմալիստական ներկայացումը, • «Թատերական պաստառների միջազգային մրցույթ փառատոնը», • Երգեհոնային երաժշտության փառատոնը:	
37.	Հայաստանում մշակութային զբոսաշրջության զարգացում և ժառանգության ոլորտի ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների ընդլայնում	37.1 «Աղձք» բնապատմական արգելոց ստեղծելու, «Աղձք» բնապատմական արգելոցի մասնաճյուղ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 7-ի N 312-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	ՀՀ կառավարության 26 մայիսի 2022 թվականի N 731-Ն որոշմամբ ստեղծվել է Աղձք» պատմամշակութային արգելոցը:	
39.	Մշակութային ժառանգության պահպանության ներառականության ապահովում,	39.2 Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության ներառական ծրագրեր	*Ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտում իրականացվել են.* *1.«Հայկական ավանդական նվագարանների պատրաստման ուսուցման»* ծրագիրը, որի 10 մասնակիցները հմտացել են փողային և լարային նվագարանների պատրաստման գործում, գիտելիքներ և ունակություններ	

	հասարակության խոցելի խմբերի համար մշակույթին հաղորդակից լինելու իրավունքի իրացում		են ձեռք բերել՝ ուսանելով ոլորտի փորձառու վարպետների մոտ: Տիրապետել են փողային (դուդուկ, զուռնա) և լարային (քանոն, քամանչա) լարային նվագարան-ների պատրաստմանը: -*«Տարեցների փորձը և մշակութային կրթությունը՝ ի նպաստ երկրի զարգացման»* ծրագրին մասնակցել են 25 շահառուներ՝ 63 և բարձր տարիքի թոշակառուներ՝ սովորելով ձեռարվեստի ավանդական տեսակներ (կարպետագործություն և ասեղնագործություն): -*«Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության»* ծրագրով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 6-16 տարեկան 50 երեխաներ մասնակցել են հայկական զարդանախ-շերով կավագործության դասընթացներին: -«Ջավախք» հայրենակցական-բարեգործական ՀԿ նախաձեռնությամբ հուլիսի 9-18-ը Նինոծմինդայի շրջանի Գանձա գյուղում տեղի է ունեցել «Ամառային մշակութային ճամբար Ջավախքում» ծրագիրը, որին մասնակցել են 9-15 տարեկան 40 երեխաներ Ջավախքի 5 գյուղերից՝ սովորելով գեղանկարչություն, դիզայն, խեցեգործություն, ասեղնագործություն, տիկնիկագործություն: -*«Ինքնության դարբնոց»* ծրագրի մասնակից հաշմանդամություն ունեցող զինվորների, մանկատան սաների, ծերանոցի շահառուների համար թանգարաններում դասավանդվել են գորգագործություն, կարպետագործություն, ասեղնագործություն, փայտի գեղարվեստական փորագրություն: Ծրագրերում ներգրավված են եղել 300-ից ավել շահառուներ:	
		39.3 Հասարակության խոցելի խմբերի համար նպատակային միջոցառումների կազմակերպում	Տարվա ընթացքում իրականացվել է *8 ներառական նախագիծ,* մասնավորապես՝ - *«Կինոդպրոց առանց սահմանների» կրթական ծրագիր՝ ՀՀ Ազգային հերոս Վահագն Ասպրոյանի անվան Հերոսների վերականգնողական քա-ղաքում»* ծրագիր: Հայաստանում առաջին *անվճար կինոդպրոցն է,* որտեղ նպաստում են մարտական գործողությունների ժամանակ հաշմանդամություն ձեռքբերած և այդ գործողություններից ներազդված երիտասարդներին մասնագիտական	

			կողմնորոշմանը, լրացուցիչ և շարունակական կրթություն ապահովում կինոարտադրության ոլորտին անհրաժեշտ մասնագիտությունների միջոցով: Ծրագիրն իրականացվում է ՀՀ Կոտայքի մարզի Պռոշյան համայնքում: Ծրագրի տարվա ընթացքում մասնակցել է 45 շահառու: Նկարահանվել է 2 ավարտական ֆիլմ: - *«Խոսող կտավներ» նախագիծ* Նախագծի շրջանակում ստեղծվել են Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածուի 5 գլուխգործոցների շոշափելի պատճենները (կույրերին հավատքի ուժով բուժիչ «Սևանի Աստվածամայրը», Անհայտ հայ նկարիչ, 17-րդ դար; «Հայաստան», Մարտիրոս Սարյան, 1923; «Հացը լեռներում», Գրիգոր Խանջյան, 1972; «Կոմիտաս. Վերջին գիշեր», Սարգիս Մուրադյան, 1956; «Խնոցի», Մինաս Ավետիսյան, 1964): Թողարկվել են նաև կտավների պատկերն ու սյուժեն նկարագրող տիֆլո-մեկնաբանությունները: - *«Hope For Dreams» երաժշտական ներառական նախագիծ* Նախագծի մասնակիցները երիտասարդ երաժիշտներ և **30** հաշմանդամություն ունեցող երեխաներ ու դեռահասներ են, ովքեր ամիսներ շարունակ փորձերի և վարպետած դասերի շնորհիվ հանրությանը ներկայացան համերգային ծրագրով: Ծրագիրն իրականացվել է Հայաստանում և ԱՀ-ում: «Hope For Dreams» երաժշտական նախագիծը՝ ծրագրի շրջանակներում առցանց մասնակցել է Մոսկվայում կայացած «Солнечная музыка» միջազգային երաժշտական ներառական փառատոնին: -*«Ֆրեսկո» արդի արվեստի և հոգևոր ֆիլմերի միջազգային ներառական փառատոն* «Միասին կարող ենք» խորագրով «Ֆրեսկո» արդի արվեստի և հոգևոր ֆիլմերի 9-րդ միջազգային ներառական փառատոնը անց է կացվել Երևանում և Վանաձորում: Առաջին անգամ փառատոնի շրջանակներում կազմակերպվեց՝ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մարզային ներառական մշակութային ճամբար, որին մասնակցեցին	

			«Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի և այլ մասնագիտացված կառույցների 120 սան, ծնող և մանկավարժ: - *«Կողք-կողքի» ներառական երաժշտական արտ միջազգային փառատոն* Փառատոնը անց է կացվել սեպտեմբերի 6-10-ը Երևանում: Փառատոնի շրջանակում տեղի ունեցան սեմինարներ և վարպետաց դասեր, կրթական և ներառական ոլորտի մասնագետների փորձի փոխանակում, մասնագետների, ծնողների գիտելիքների ընդլայնում: Սեմինարներն և վարպետաց դասերը վարել են Գերմանիայից, Ռուսաստանից և Հորդանանից հրավիրված մասնագետներ: Ծրագիրին մասնակցել են շուրջ 200 պատանի, դեռահաս հաշմանդամություն ունեցող անձինք և անվանի երաժիշտներ, հյուրեր: - *«Ձեռք ձեռքի տված» ծրագիր* Նախագիծն իրականացվել է Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ում, «Երևանի մանկան տուն» ՊՈԱԿ-ում, «Source Foundation Supporting Children with disabilities» և «Էմիլի Արեգակ» բազմակի հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների խնամքի, զարգացման կենտրոններում: Նախագծի շրջանակներում կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ՝ երաժշտաթերապիայի դասընթացներ, սեմինարներ, համերգներ: «Նախագծին մասակցել է 48 երեխա, 48 ծնող (խնամակալ), 20 մասնագետ: - *«Ազգամեջ» ծրագիր* Ծրագրի 33 շահառուները սովորել են կարել, ասեղնագործել: Ծրագրեի արդունքում պատրաստվել է 150 կտորե տոպրակ, խոհանոցային պարագաներ, շապիկներ, որոնցից 30՝ ասեղնագործված հայկական զարդանախշերով, ինչպես նաև կազմակերպվել՝ 2 ցուցահանդես: - *«Միասին ստեղծում ենք» ծրագիր* Ծրագրի շրջանակում Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի «Միասին» ներառական թատերախմբի կողմից բեմադրվեց «Ավելի ուժեղ, քան թվում է» ներկայացումը՝ ըստ Ալան Ալեքսանդր Միլնի «Վինի Փու արջուկը» վիպակի: Ներառական թատերախումբը կազմված է 12 մասնակցից /7-16 տարեկան երեխաներ/: Թատերախումբը	

			ներկայացումներով հանդես է եկել Երևանի Գեղագիտության ազգային կենտրոնի Փոքր թատրոնում (շուրջ 80 հանդիսատես) և ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոնում (շուրջ 300 հանդիսատես):	
40.	Մշակույթի կառավարման ժամանակակից համակարգերի ներդրում	40.1 Ոլորտի կազմակերպությունների մարքեթինգի, սեգմենտացիայի, թիրախավորման, դիրքավորման, գիտելիքների և ռեսուրսների ձևավորում, դասընթացների իրականացում	Ոլորտի կազմակերպությունների մարքեթինգի, սեգմենտացիայի, թի-ռախավորման, դիրքավորման, գիտելիքների և ռեսուրսների ձևավորման ուղղությամբ իրականացվող դասընթաց-ներն անց են կացվել ապրիլ-հոկտեմբեր ամիսներին: Ծրագրին մասնակցել են ավելի քան 200 մարդ:	
		40.2 Ֆոնդահայթայթման կարողությունների զարգացում	Ֆոնդահայթայթման ուղեցույցի շնորհանդեսը կայացել է հոկտեմբերի 17-ին:	
		40.3 «Կառավարման կարողությունների զարգացում» դասընթացների իրականացում	«Կառավարման կարողությունների զարգացում» դասընթացներն անց են կացվել ապրիլ-հոկտեմբեր ամիսներին: Ծրագրին մասնակցել է 180 մարդ:	
41.	Ինքնազբաղ/ անկախ ստեղծագործողների հանրային ինստիտուտիցիոնալացում	41.1 Ինքնազբաղ/ անկախ ստեղծագործողների գործունեության խթանում	Ինքնազբաղ արվեստագետների հետ աշխատանքներներ իրականացնելու նպատակով համապատասխան փոփոխություն է կատարվել «Հայաստանի պետական ֆիլհարմոնիա» ՊՈԱԿ-ի կա-նոնադրության մեջ և կազմակերպվել են շուրջ 45 արվեստագետների 50 համերգներ: 450 արվեստագետ ընդգրկվել է տարբեր մշակութային ծրագրերի և նախագծերի մեջ:	
		41.2 Կինոնկարների արտադրություն	Իրականացվել է՝ 17 կինոնախագիծ, այդ թվում՝ 5 խաղարկային և խաղարկային-վավերագրական լիամետրաժ կինոնախագիծ (զարգացման, արտադրական և հետարտադրական փուլեր), 3 կարճամետրաժ խաղարկային կինոնախագիծ (արտադրություն), 6 անիմացիոն կինոնախագիծ, որից 4-ը անցողիկ՝ 2023 թ.(արտադրություն), 3 վավերագրական կինոնախագիծ որից 1-ը անցողիկ՝ 2023 թ.(արտադրություն):	

42.	Մշակույթի մեկենասության ինստիտուտի ներդրում և կայացում և պետություն-մասնավոր համագործակցության ընդլայնմանն ուղղված փոխշահավետ մեխանիզմների խթանում	42.1 Մշակույթի մեկենասի հանրային վարկանիշի ձևավորում, մեկենասության պետական խրախուսում տեղեկատվական դաշտում	2019 թ. ավարտվել են «Մեկենաս» 1-ին տարեգրքի տպագրության աշխատանքները: 2-րդ տարեգիրքը գտնվում է մակետավորման փուլում՝ հավաքագրվել են նյութերը, ներկայում ընթանում են նախապատրաստական աշխատանքներ: Տարեգիրքը բաղկացած կլինի շուրջ 30 գլխից, որոնցում արծարծվելու են երաժշտարվեստի, թատերարվեստի, պարարվեստի, կինոարվեստի խնդիրներ՝ մեկենասության համատեքստում:	
		42.2 Բարերարների հետ համագործակցություն, պետական միջոցներով կազմված վերականգնման նախագծերի անվճար տրամադրում, մասնագիտական խորհրդատվություն, հուշագրերի ստորագրում, մեկենասության տարեգրքի համար տեղեկատվության տրամադրում	• Բարերարների հետ կնքվել են 4 հուշագրեր, • առանց հուշագիր կնքելու բարերարների կողմից վերականգնվել են 3 հուշարձան, • անվճար հիմունքներով բարերարներին տրամադրվել են 6 հուշարձանի՝ 1-ի արխիվային փաստաթղթեր և համաձայնեցվել են 5 հուշարձանի նախագծեր:	
43.	Թատերահամերգային կազմակերպություններում նյութատեխնիկական բազայի արդիացում	43.1 Մշակութային հաստատությունների գույքի և նյութատեխնիկական բազայի բարելավում	ՀՀ 2022թ. պետական բյուջեով *«Ներդրումներ թատրոնների շենքերի կապիտալ վերանորոգման համար» և «Թատերահամերգային կազմակեր-պությունների նյութատեխնիկական բազայի համալրում»* ծրագրերով՝ հատկացվել է 1.284.487.1 հազ. դրամ հետևյալ կազմակերպություններին. *-«Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ* *-«Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ՝* *- «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ* *-«Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ* *- «Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ* *- «Հայաստանի երգի պետական թատրոն» ՊՈԱԿ* *- «Հայաստանի էստրադային ջազ նվագախումբ» ՊՈԱԿ*	

			-«Կ. *Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ* - *«Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոն» ՊՈԱԿ*	
44.	Պետական կոլեկտիվների լիարժեք գործունեությունն ապահովելու նպատակով ստեղծագործական միությունների գույքային ռեսուրսի քարտեզագրում	44.1 Ստեղծագործական միությունների և պետական կազմակերպությունների համագործակցության խթանում, գույքային պակասորդի մեղմացում գույքային ռեսուրսների և մասնագիտական ներուժի վերլուծություն, քարտեզագրում	Տարվա ընթացքում մշակութային ծրագրերի իրականացման նպատակով ակտիվորեն օգտագործվել են ստեղծագործական միությունների (Հայաստանի կոմպոզիտորների միություն, Հայաստանի նկարիչների միություն, Հայաստանի կինոգործիչների միություն) հարթակները, խթանվել է համագործակցությունը թատերահամերգային կազմակերպությունների հետ: Մասնավորապես՝ -«Եղիշե Չարենց 125» գրական-երաժշտական երեկո» նախագիծը՝ ներկայացվել է Դիլիջանի կոմպոզիտորների տանը, - Անվանի կիոնոգործիչների հետ հանդիպումները Կինոյի տանը, -Յուրի Երզնկյանի 100-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումներ Լոռու մարզում:	
45.	Մշակութային-կրթական նպատակային ծրագրերի իրականացում	45.1 «Դասարան «Դասական» ստեղծագործական կրթական ծրագրի իրականացում	Դասարան+Դասական» ստեղծագործական կրթական ծրագիրն իրականացվել է հունիսի 13-26-ը: Ծրագրին մասնակցել է 70 աշակերտ: Ծրագիրը հաջողությամբ ավարտած մասնակիցների համար պատրաստվել են անցաթերթիկներ, որոնց հիման վրա աշակերտները կկարողանան անվճար մուտք ունենանալ Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն՝ 2022-2023թթ. խաղաշրջանի ընթացքում:	
		45.2 Ներառական փառատոների կազմակերպում, մշակույթի ոլորտի մասնագետների, արվեստագետների հետ համատեղ միջոցառումների իրականացում	• Հ. Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոն ԳԱԿ-ը իրականացրել է 270 միջոցառում, այդ թվում՝ 20 ներառական, 4 լայնամասշտաբ միջոցառում: Կրթական, մշակութային, ճանաչողական միջոցառումներին մասնակցել է հաշմանադամություն ունեցող 150 շահառու: ԳԱԿ-ում սովորել են 1535 սան անվճար հիմունքներով և 630 ՝ վճարովի: • «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ը հաշմանդամություն ունեցող, ծնողազուրկ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և սոցիալապես անապահով 935 երեխաների համար, 145 խմբերում իրականացրել է անվճար ուսուցում արվեստի և	

			արհեստների 5 ոլորտում (դեկորատիվ կիրառական արվեստ, երաժշտարվեստ, թատերարվեստ, կերպարվեստ, պարարվեստ): ՊՈԱԿ-ը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել և ապահովել է իր սաների մասնակցությունը շուրջ 57 միջոցառմանը, որից 2 միջոցառումը կազմակերպվել է առաջին անգամ:	
		45.3 Երևանի և մարզերի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների փոխգործակցության «Քույր դպրոցներ» կրթական նպատակային ծրագրի իրականացում	Ապրիլ-նոյեմբեր ամիսներին ել է արվեստի դպրոցների փոխգործակցության «Քույր դպրոցներ» ծրագիրը, որի նպատակը մշակութային կրթության, ավելի լայն առումով՝ արտադպրոցական դաստիարակության ոլորտի շարունակական զարգացումն է: Ծրագրի շրջանակներում Երևանի և ՀՀ մարզերի ընտրված 60 երաժշտական և արվեստի դպրոցների միջև ստեղծվել են ստեղծագործական, փորձի փոխանակման, համատեղ համերգային ծրագրերի իրականացման, ուսումնամեթոդական աջակցության նոր կապեր: Կազմակերպվել են համերգներ, վարպետության դասեր, համատեղ համերգային ծրագրեր, հայրենաճանաչության բաղադրիչ ունեցող այցելություններ պատմամշակութային վայրեր և թանգարաններ: Ծրագրի շրջանակում իրականացել է 50 վարպետության դաս, որում ընդգրկվել են շուրջ 250 աշակերտ: Փոխայցելությունների շրջափուլին մասնակցել է 500 սովորող և դասատու:	
		45.4 «Քո արվեստը դպրոցում» ծրագիր	«Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ապրիլ-նոյեմբեր ամիսներին իրականացվել է *«Քո արվեստը դպրոցում. Մասնագիտության որոնումներում»* ծրագիրը: Ծրագրի շրջանակներում տեղի են ունեցել 50 հանդիպում արվեստագետների հետ Երևանում և ՀՀ մարզերում: Ընդհանուր հանդիպումներին մասնակցել են 525 դպրոցի 4887 սան և 525 ուղեկցող մանկավարժ:	

		45.5 «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի իրականացում	*«Մեկնարկ»* տաղանդի զարգացման նպատակային 2022 թ. ծրագրում ընդգրկվել են 11-20 տարեկան 15 տաղանդավոր երիտասարդ երաժիշտ-կատարող և 6 առաջատար մասնագետ՝ դաշնամուր, ջութակ, թավջութակ մասնագիտութ-յուններով: Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի **13** շնորհալի երեխաներ մասնակցել են **18** առկա և առցանց երաժշտական միջազգային մրցույթներին և արժանացել են 1-ին և 2-րդ մրցանակներին: Ծրագրի անդամները մի շարք վարպետության դասեր են ստացել աշխարհի լավագույն մասնագետներից, հանդես են եկել ՅՈՒՆԵՍԿՕ-ի կեն-տրոնակայանում՝ Փարիզում՝ և Թունիսում կայացած Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի համերգին: Ծրագրի երկու անդամներ Բուլղարիայում ելույթ են ունեցել Սոֆիայի սիմֆոնիկ նվագախմբի հետ, իսկ մեկը՝ մենահամերգներով ելույթներ է ունեցել Ավստրիայում և Գերմանիայում: Ծրագրի մեկ այլ անդամ ելույթ է ունեցել Մեծ Բրիտանիայի Վեստմինստեր քառյակի հետ, մեկը՝ ամի քանի ելույթներով մասնակցել է ՌԴ-ում Բաշմետի անվան երաժշտական փառատոնին: Եվս երկու անդամներ մասնակցել են Լիբանանում կայացած MUSICALES de BAABDATH միջազգային երաժշտական փառատոնին՝ Լիբանանի նվագախմբի նվագակցությամբ: Ծրագրի բոլոր անդամները մասնակցել են Երևանի և ՀՀ մարզերում կազմակերպված բազմաթիվ համերգների:	
		45.6 «Երաժշտական և արվեստի դպրոցների համար ուսումնամեթոդական գրականության մշակում և հրատարակում» ծրագրի իրականացում	Ծրագրի շրջանակներում հրատարակվել է **7** ուսումնամեթոդական ձեռնարկ, որոնց թվում՝ *Արվեստի պատմություն.* Կերպարվեստ (Գիրք 2), Պատմակենցաղային պարեր, Դասական պար, Հայկական ժողովրդական պար, Ժողբնորոշ պար (առարկայական ծրագրեր), Հայ ժողովրդական նվագարաններ, Հայ կոմպոզիտորների մանկական երգեր, Քրիստոմատիա կիթառի համար /1-7 դասարաններ/, Քրիստոմատիա կլարնետի համար /1-7 դասարաններ, «Քրիստոմատիա սանթուրի համար /2-5 դասարաններ/: Հրատարակված ձեռնարկները անվճար կտրամադրվեն արտադպրոցական ուսումնական հաստատություններին:	
46.	Մշակույթի ոլորտում Ռուսաստանի Դաշնության	46.1 2022թ. Հայաստանում Ռուսաստանի և Ռուսաստանում	*«Հայաստանի մշակույթի օրեր Ռուսաստանում» ծրագրի շրջանակում* հունիսի 10-11-ը միջոցառումները կայացել են Մոսկվայում, իսկ հունիսի 13-	

	հետ երկկողմ համագործակցության հաստատում և խթանում	Հայաստանի մշակույթի օրերի և այլ մշակութային միջոցառումների անցկացում՝ նվիրված ՀՀ և ՌԴ միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին	ին՝ Կիսլովոդսկում: Մշակույթի օրերի շրջանակում Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախումբը և Կոմիտասի անվան ազգային քառյակը հանդես են եկել համերգներով: *Հայաստանում Ռուսաստանի հոգևոր մշակույթի օրեր»* միջոցառումը տեղի է ունեցել 2022թ. հոկտեմբերի 5-7-ը: Միջոցառման շրջանակում հոկտեմբերի 5-ին Մոսկվայի Սինոդի երգչախումբը համերգներով հանդես է եկել Լոռու մարզի Ամրակից գյուղի Սուրբ Նիկողայոս հրաշագործ եկեղեցում և Վանաձորի ռուսական ուղղափառ եկեղեցում, իսկ հոկտեմբերի 6-ին՝ Սևանում: - Ռուսաստանյան պատվիրակության այցի շրջանակում կազմակերպվել են նաև երկկողմ հանդիպումներ կինոոլորտի մասնագետների և արվեստի բուհերի ներկայացուցիչների միջև: - Հայաստանի և Ռուսաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների 30-ամյակի շրջանակներում ՌԴ Ուլյանովսկ քաղաքում տեղի է ունեցել համերգ՝ դիրիժոր Ռուբեն Ասատրյանի մասնակցությամբ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը հանդես է եկել Սիրիուս փառատոնին, իսկ Հայաստանի պետական կամերային նվագախումբը ելույթ է ունեցել Մոսկվայում: - ՀՀ և ՌԴ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 21-րդ նիստում որոշում է ընդունվել հաջորդ տարի ՀՀ-ում անցկացնել ՌԴ մշակութային օրեր: - Նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 3-ը Ռուսաստանի Դաշնության Սանկտ Պետերբուրգ քաղաքում կայացել են Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախմբի հյուրախաղերը: Նոյեմբերի 11-ին թատերական գործիչները Ռուսաստանի Դաշնության Սանկտ Պետերբուրգ քաղաքում հանդիպել են Ալեքսանդրինսկի թատրոնի տնօրինության հետ ինչպես նաև մասնակցել են «Ազգային թատրոնը համաշխարհային մշակույթի համատեքստում, մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով միջազգային կլոր սեղանի քննարկմանը մասնակցելու նպատակով:	
		46.2 ՀՀ ԿԳՄՍ նախարարության և ՌԴ մշակույթի նախարարության միջև 2022-	«ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարարության միջև 2022-2025 թթ. մշակույթի բնագավառում համագործակցության» ծրագիրը	

		2024թթ. համագործակցության ծրագրի ստորագրում	ստորագրվել է 2022 թ. ապրիլի 19-ին՝ ՀՀ կառավարական պատվիրակության՝ ՌԴ կատարած այցի շրջանակում: Հայաստանյան կողմից ծրագիրը ստորագրել է ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը, իսկ ռուսաստանյան կողմից՝ ՌԴ մշակույթի նախարար Օլգա Լյուբիմովան: Ծրագիրն ուղղված է երկու երկրների միջև մշակութային երկխոսության զարգացմանը, մշակութային շփումների խթանմանը և համատեղ մշակութային ծրագրերի իրականացմանը:	

Սպորտ

47.	Մարզական բարձր արդյունքներին ուղղված բարեփոխումներ	47.1 «Բարձրագույն վարպետության դպրոց ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	Բարձրագույն վարպետության մարզադպրոց ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2022 թվականի օգոստոսի 17-ի N 01/31.3/19928-2022 գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	
48.	Միջազգային հեղինակավոր մարզական միջոցառումներին մասնակցության ապահովում, Հայաստանի Հանրապետության մարզական հեղինակության բարձրացում, միջազգային մրցասպարեզներում բարձր մարզական	48.1 2022 թվականի Պեկինի ձմեռային օլիմպիական խաղերին Հայաստանի Հանրապետության մարզական պատվիրակության մասնակցության ապահովում	2022 թվականի փետրվարի 4-20-ը Պեկինում կայացած ձմեռային 24-րդ օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրա-կությունը ներկայացել է 12 հոգով: Խաղերի ծրագրով Հայաստանի մարզիկները մասնակցել են դահուկային սպորտ և գեղասահք մարզաձևերում: *Գրանցվել են հետևյալ արդյունքները՝* 1. դահուկավազք-3 մարզիկ (2 կին, 1 տղամարդ), 10 կմ *դասական* ոճ -74-րդ տեղ, արագավազք - 80-րդ տեղ, 15 կմ + 15 կմ սկիատլոն-47-րդ տեղ, 15 կմ դասական ոճ՝ 61-րդ տեղ, 10 կմ դասական ոճ-94-րդ տեղ, 2 2. գեղասահք մարզաձևում (1 պարային զույգ), գրավել են 18-րդ տեղը: Լեռնադահուկային մարզաձևը ներկայացնող 1 մարզիկը, COVID համավարակի պատճառով չի մեկնել Պեկին:	

	արդյունքների ցուցաբերում			
49.	Մանկապատանեկան սպորտի զարգացում	49.1 «Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցները, մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական հասարակական կազմակերպություններ գույքով ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացումը ՀՀ Վարչապետի աշխատակազմ	ՀՀ կառավարության կողմից ընդունվել է 2022 թվականի նոյեմբերի 24-ի N 1816-Ա որոշումը:	
		49.2 «ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 1-ի «Մանուկների և պատանիների՝ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ պայմանների նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 1428 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացումը ՀՀ Վարչապետի աշխատակազմ	«Մանուկների և պատանիների՝ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ պայմանների նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 1428 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ընդունվել է ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 13-ի N 678-Ն որոշմամբ:	
50.	Բնակչության տարբեր տարիքային խմբերի համար զանգվածային սպորտի տարածմանը և առողջ ապրելակերպի	50.1 «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշարի անցկացում	Մրցաշարն անցկացվել է 2022 թ. մայիսի 28-ին՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի թերակղզի-Շողակաթ համայնքի (նախկին Շորժա) 40 կմ ճանապարահատվածում՝ մեկ փուլով՝ երկու տարիքային խմբով՝ 1. 18-35 տարեկան կանայք, 18-40 տարեկան տղամարդիկ, 2. 36 և բարձր տարիքի կանայք, 41 և բարձր տարիքի տղամարդիկ:	

	քարոզմանն ուղղված ծրագրերի իրականացման անընդհատության ապահովում		Միջացառմանը մասնակցել են նաև օտարերկրյա քաղաքացիներ, ՀՀ-ում հավատարմագրված դեսպանատների աշխատակիցներ, դեսպաններ: Միջոցառման պարգևատրման արարո-ղությունը իրականացրվել է ՀՀ Վարչապետի և ՀՀ կառավարության անդամների կողմից: Միջոցառմանը մասնակցել են 365 հեծանվորդ, մրցանակային ֆոնդը կազմել է 15 մլն. ՀՀ դրամ: Ընդհանուր առմամբ 80 մասնակիցներ պարգևատրվել են դրամական մրցանակներով՝ 1-ին տեղի համար սահմանված էր 1 մլն դրամ մրցանակ, 2-րդ տեղի համար՝ 600 հազար դրամ, 3-րդ տեղի համար՝ 400 հազար դրամ, 4-րդ տեղի համար՝ 150 հազար դրամ, 5-րդ տեղի համար՝ 100 հազար դրամ: 6-10-րդ տեղեր գրավածների համար՝ 75-հազարական դրամ, 11-20-րդ տեղերի համար՝ 50 հազարական դրամ: Օտարերկրյա մասնակիցները պարգևատրվել են հավաստագրերով, հուշանվերներով:	
		50.2 «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարի անցկացում	«Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարը անցկացվել է 2022 թ. փետրվար-մարտ ամիսներին երկու փուլով՝ -առաջին տարածքային փուլ՝ ՀՀ մարզերում, Երևան քաղաքում և ԱՀ-ում - երկրորդ եզրափակիչ փուլ՝ մարտի 18-19-ին ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում: Մրցաշարը անցկացվել է երկու տարիքային խմբով՝ ՝ 1. 18-35 տարեկան կանայք, 18-40 տարեկան տղամարդիկ, 2. 36 և բարձր տարիքի կանայք, 41 և բարձր տարիքի տղամարդիկ: Մրցաշարին մասնակցել են նաև օտարերկրյա քաղաքացիներ, ՀՀ-ում գործող դեսպանա-տների աշխատողներ, դեսպաններ: Միջոցառման պարգևատրման արարո-ղությունը իրականացրվել է ՀՀ Վարչապետի և ՀՀ կառավարության անդամների կողմից: Միջոցառմանը մասնակցել է 1620 մարդ, մրցանակային ֆոնդը կազմել է 15 մլն. ՀՀ դրամ: Ընդհանուր առմամբ 80 մասնակիցներ պարգևատրվել են դրամական մրցանակներով՝ 1-ին տեղի համար սահմանված էր 1 մլն դրամ մրցանակ, 2-րդ տեղի համար՝ 600 հազար դրամ, 3-րդ տեղի համար՝	

			400 հազար դրամ, 4-րդ տեղի համար՝ 150 հազար դրամ, 5-րդ տեղի համար՝ 100 հազար դրամ: 6-10-րդ տեղեր գրավածների համար՝ 75-հազարական դրամ, 11-20-րդ տեղերի համար՝ 50 հազարական դրամ: Օտարերկրյա մասնակիցները պարգևատրվել են հավաստագրերով, հուշանվերներով:	
		50.3 «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական լողի մրցաշարի անցկացում	Օգոստոսի 23-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի լողափնյա տարածքում կայացել է «ՀՀ Վարչապետի գավաթ» սիրողական լողի մրցաշարը: Մրցաշարին մասնակցելու համար հայտ էին ներկայացրել 133 մարդ՝ 92 տղամարդ (18-ից 40 տարեկան՝ 39, 41-ից բարձր տարիքի 53) և 41 կին (18-ից 35 տարեկան՝ 15, 36-ից բարձր տարիքի՝ 26): Հայտ ներկայացրած անձանցից 12-ը օտարերկրյա քաղաքացիներ էին, որից 9-ը տղամարդ, 3-ը՝ կին: Կանայք մրցել են 1000 մետր, իսկ տղամարդիկ՝ 1500 մետր լողատարածություն-ներում: Մրցաշարին երկու տարիքային խմբերում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված մասնակիցները (տղամարդիկ և կանայք) պարգևատրվել են խոշոր դրամական մրցանակներով՝ 1-ին տեղի համար սահմանված էր 1 միլիոն դրամ մրցանակ, 2-րդ տեղի համար՝ 600 հազար դրամ, 3-րդ տեղի համար 400 հազար դրամ: Դրամական մրցանակներ էր նախատեսված նաև 4-ից-10-րդ տեղեր գրավածների համար՝ 4-րդ տեղի համար՝ 150 հազար դրամ, 5-րդ տեղի համար՝ 100 հազար դրամ, 6-10-րդ տեղերի համար՝ 75-հազարական դրամ: Ընդհանուր առմամբ 40 մասնակից պարգևատրվել են դրամական մրցանակներով: Լավագույն արդյունք ցուցաբերած օտարերկրյա մասնակիցները պարգևատրվել են հավաստա-գրերով և հուշանվերներով: Մրցաշարի բոլոր մասնակիցներին տրվել են մասնակցության հավաստագրեր:	
		50.4 «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» խճուղավազքի մրցաշարի անցկացում	Մրցաշարը անցկացվել է հոկտեմբերի 25-ին՝ ՀՀ Արմավիրի մարզի, Փարաքար-Էջմիածին մայրուղու ընտրված հատվածում: Այն անցկացվել է երեք տարիքային խմբով և աթլետիկա մարզաձևով զբաղվող՝ գործող աթլետ մարզիկների առանձին խմբով՝ -1-ին տարիքային խումբ՝ 2005-2007թթ. ծնված դպրոցականներ (2 կմ տղաներ և աղջիկներ) - 2-րդ տարիքային խումբ՝ 2004-1987թթ. ծնված կանայք և 2004-1982թթ.	

			ծնված տղամարդիկ (10կմ), - 3-րդ տարիքային խումբ՝ 1986թ. ծնված և բարձր տարիքի կանայք և 1981թ. ծնված և բարձր տարիքի տղամարդիկ (10կմ) -աթլետիկայով զբաղվող ՀՀ քաղաքացիներ, առանց տարիքային սահմանափակման (10 կմ տղամարդ, կին): Միջոցառմանը մասնակցել են նաև օտարերկրյա քաղաքացիներ, ՀՀ-ում հավատարմագրված դեսպանատների աշխատակիցներ: Մասսայական մրցաշարին մասնակցել է 1392 մարդ: 126 մասնակից /տղամարդ և կին/ պարգևատրվել են դրամական մրցանակներով: Ամենատարեց և օտարերկրյա մասնակիցնե-րին տրվել են հավաստագրեր և հուշանվերներ:	
		50.5 Մասսայական սպորտին առնչվող ծառայությունների իրականացում	*Իրականացվել է՝* **1**.«ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Լեռնային Ղարաբաղ հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների միջև «*Սպորտլանդիա*» մարզական միջոցառումը. Մրցումներն անցկացվել են չորս փուլով՝ 1-ին ներդպրոցական փուլ՝ փետրվար-մարտ ամիսներին, 2-րդ համայնքային փուլ մարտի 10-30-ը, 3-րդ մարզային փուլ ապրիլի 10-25-ը: 4-րդ եզրափակիչ-հանրապետական փուլ՝ մայիսի 7-ին՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում: «Սպորտլանդիա» մարզական միջոցառմանը մասնակցել են՝ 12060 աշակերտ (1-3-րդ դասարաններ-559 դպրոց՝ 5590 աշակերտ, 4-6-րդ դասարաններ-647 դպրոց՝ 6470 աշակերտ): Մրցանակային տեղեր զբաղեցրած մասնակիցները պարգևատրվել են՝ ԿԳՄՍՆ համապատասխան կարգի հավաստագրերով, շնորհակալագրերով, գավաթներով, մարզագույքով ու դրամական մրցանակով՝ մարզագույք ձեռք բերելու համար: Մրցման հանրապետական եզրափակիչ փուլի մրցանակային 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված հանրակրթական դպրոցները պարգևատրվել են 1-ին տեղ՝ 400 հազար դրամ, 2-րդ տեղ՝ 300 հազար դրամ, 3-րդ տեղ՝ 200 հազար դրամ: **2**. «ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Լեռնային Ղարաբաղ հանրակրթական դպրոցների 7-12--րդ դասարանների աշակերտների միջև	

			սպարտակիադա» մարզական միջոցառումը. Սպարտակիադան անցկացվել է 4 փուլով 9 մարզաձևից՝ 1-ին փուլ՝ ուսումնական հաստատություններում, 2-րդ փուլ՝ համայնքներում, 3-րդ փուլ՝ մարզերում, 4-րդ՝ հանրապետական եզրափակիչ փուլ: Սպարտակիադայի ծրագրով 9 մարզաձևերի՝ ֆուտզալի, հնգամարտի (աթլետիկական), հրաձգության, բազկամարտի, բասկետբոլի, վոլեյբոլի, սեղանի թենիսի, շախմատի և լողափնյա վոլեյբոլի համայնքային փուլի մրցումներին մասնակցել է 19188, իսկ հանրապետական փուլին՝ *1004* դպրոցականներ: անցկացված համայնքային փուլի մրցումներին մասնակցել են ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Լեռնային Ղարաբաղ 19188 դպրոցական, իսկ եզրափակիչ փուլերի մրցումներին՝ 1004 դպրոցականներ: Ընդհանուր հաշվարկով հանրապետական եզրափակիչ փուլի 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված մարզերը համապատասխանաբար պարգևատրվել են 450, 350, 250 հազարական ՀՀ դրամական մրցանակով՝ մարզագույք ձեռք բերելու համար: 4-ից 12-րդ տեղեր գրաված մարզերը պարգևա-տրվել են մարզագույքով: **3**.«Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր. Խաղերն անցկացվել են 4 փուլով՝ ներդպրոցական, տարածաշրջանային, մարզային, եզրափակիչ: Խաղերի 1-ին փուլին մասնակցել են ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների շուրջ 20000 աշակերտներ: - 4-րդ՝ եզրափակիչ փուլի մրցումներն անցկացվել են հոկտեմբերի 2022 թվականի 25-28-ը ՀՀ պաշտպանության նախարարության Արմավիրի մարզի Հովի. Բաղրամյանի անվան ուսումնական զորամասում: Մասնակցել են ՀՀ մարզերի և Երևանի 1-ին տեղեր գրաված հանրակրթական դպրոցների աշակերտներից ձևավորված հավաքական թիմերը: Խաղերի ծրագրում ներառված են հետևյալ մարզաձևերը՝ նռնակի նետում, 8 կգ-անոց ուսապարկով փոխանցավազք (4x50 մ), ձգումներ	

			պտտաձողից, կրոսավազք (1000մ), հրաձգություն, ինքնաձիգի քանդում-հավաքում: Եզրափակիչ փուլի մրցումներին մրցանակային տեղեր գրված թիմերի անդամները և դպրոցները պարգևատրվել են հավաստագրերով, գավաթներով, իսկ թիմերի անդամները՝ նվերներով:	

Երիտասարդություն				
51.	Պետական երիտասարդական քաղաքականության իրավական հիմքերի կատարելագործում	51.2 Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի պատրաստման ուղեցույցի և կրթական ծրագրի մշակում և ներկայացում ՀՀ ԿԳՄՍ նախարարի հաստատմանը	2022 թվականի դեկտեմբերի 30-ին հաստատվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Երիտասարդական աշխատանք» վերապատրաստման լրացուցիչ կրթության մոդուլային ծրագիրը՝ որպես լրացուցիչ կրթության փորձնական մոդուլային ծրագիր հաստատելու մասին» N 2496-Ա/2 և «Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի վերապատրաստման ուղեցույցը հաստատելու մասին» N 2502-Ա/2 հրամանները:	Տարեսկզբից իրականացվել են աշխատանքային քննարկումներ «Սոցիալական աշխատանք» և «Մանկավարժություն» մասնա-գիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական բուհերի և երիտասարդական ՀԿ-ների ներկայացուցիչների հետ՝ «Երիտասարդական աշխատանք» կրթական ծրագրի բովանդա-կության և ակադեմիական համակարգում ներդրման հնարավորությունների վերաբերյալ: Քննարկման ընթացքում հստակ ուրվագծվել է ներկա ժամանակահատվածում ֆորմալ կրթական ծրագրի մշակման

				անիրատեսականությունը: Բացի այդ ֆորմալ կրթական ծրագրի մշակումը կրթական հաստատության իրավասության շրջանակներում է, և տվյալ դեպքում նախարարությունն ընդամենը կրթական ծրագիրը լիցենզավորող մարմին է: Ելնելով այս փաստից՝ աշխատանքներ են տարվել ոչ ֆորմալ կրթական գործիքակազմով «Երիտասարդական աշխատանք» վերապատրաստման լրացուցիչ կրթության փորձնական մոդուլային ծրագրի և երիտասարդական աշխատողի վերապատրաստման ուղեցույցի մշակման շուրջ: Մասնավորապես, ուսումնասիրվել և առանձնացվել են այն բուհերը և երիտասարդական կազմակերպու-թյունները, որոնք կարող են լինել հնարավոր շահառու կառույցներ՝

				երիտասարդական աշխատողի վերապատրաստման ոչ ֆորմալ կրթական ծրագրի հայտ ներկայացնելու և/կամ ծրագրի մշակման աշխատանքներում ներգրավվելու համար: Տեղի են ունեցել աշխատանքային հանդիպումներ հնարավոր շահառու կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Նոյեմբերի 3-րդ տասնօրյակում տեղի է ունեցել հանդիպում հաստիքային երիտասարդական աշխատողներ ունեցող և երիտասարդության ոլորտում ակտիվ գործող ՔՀԿ-ների ներկայացուցիչների հետ, ուղեցույցի կառուցվածքի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու համար: Վերոնշյալ աշխատանքները պատշաճ մակարդակով իրակա-նացնելու համար պահանջվել է ծրագրով

				նախատեսվածից ավելի շատ ժամանակ:
53.	Հայաստանի մարզային համայնքներում երիտասարդության ներուժի բացահայտման, համակողմանի զարգացման, ինքնիրացման, ինքնադրսևորման և ինտելեկտուալ ժամանցի կազմակերպման համար նպաստավոր միջավայրի ձևավորում	52.1 «Երիտասարդական միջավայրի» գործունեության ուղեցույցի մշակում և ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատում		Տարեսկզբից երեք անգամ հայտարարված դրամաշնորհային մրցույթները հայտեր չստանալու հիմքով հայտարարվել են չկայացած: Հոկտեմբերի 19-ին 4-րդ անգամ հայտարարվել է դրամաշնորհային մրցույթ, որի շրջանակում հաղթող ճանաչված «Բի էՍ ՍԻ» բիզնեսի աջակցման կենտրոն ՍՊԸ հետ կնքվել է դրամաշնորհի տրամադրման նվիրաբերության պայմանագիր երիտասարդական միջավայրի գործունեության ուղեցույցի մշակման համար: 2022 թ. դեկտեմբերի 30-ին հաստատվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Երիտասարդական միջավայրի գործունեության ուղեցույցը հաստատելու մասին» N 2505-Ա/2» հրամանը:
		52.2 Աջակցություն «երիտասար-դական միջավայրի» ձևավորմանը		2022 թ. նախատեսվել է ձևավորել 2

				երիտասարդական կենտրոն՝ ընդհանուր 52,644.0 հազար ՀՀ դրամ բյուջեով: Այդ նպատակով 1-ին կիսամյակում հայտարարվել է դրամաշնորհային մրցույթ, որի հիմքում դրվել է բիզնես մոդելի հիմքով կենտրոնների առնվազն 5 տարի աշխատանքների իրականացումը, որտեղ պետության աջակցությունը տրվում է բացառապես կենտրոնի ստեղծման համար՝ առանց կենտրոնի գործունեության ապա-հովման համար հետագա պետական պարտավորություն-ների: Հաղթող ճանաչված երկու կազմակերպությունների՝ «ԼՈՖԹ» ՍՊԸ-ի և «ԼՈՖԹ» կրթության, մշակույթի և երիտասարդության զարգացման համահայկական ՀԿ-ի հետ կնքվել է դրամաշնորհի պայմանագրեր՝ Իջևան և Մեղրի քաղաքներում երիտասարդական միջավայրեր/կենտրոններ

				հիմնա-դրելու մասին, որից հետո Իջևան և Մեղրի համայնքների և շահող կազմակերպությունների միջև կնքվել են ընտրված տարածքների անհատույց օգտագործման պայ-մանագրեր 10 տարի ժամկետով: 2022թ. նոյեմբերի 28-ին «ԼՈՖԹ» ՍՊԸ և «ԼՈՖԹ» կրթության, մշակույթի և երիտասարդության զարգացման համահայկական ՀԿ դիմել են ՀՀ ԿԳՄՍ նախարարու-թյանը՝ խնդրելով կնքված պայմանագրերում կատարել փոփոխություն: Ծրագրերի իրականացման ժամկետը 2022 թվականից 2023 թվականի մայիս ամիս հետաձգելու և Ծրագրերի իրականացման համար նախատեսված գումարը 2022 թվականին 100% կանխավճարով տրամադրելու խնդրանքով:ՀՀ ԿԳՄՄՆ մասնակի բավարարել է կազմակերպությունների

				խնդրանքը՝ բավարարելով ծրագրի իրականացման համար նախատեսված գումարը 2022 թվականին 100% կանխավճարով տրամադրելու խնդրանքը, իսկ ծրագրի իրականացման համար աշխատանքների իրականացման ժամկետը երկարացնելու խնդրանքը մերժել է, քանի որ Կազմակերպությունների հետ կնքված պայմանագրի ժամկետը մինչև 2027 թվականն է և Կազմակերպությունները Ծրագրի իրականացման գործողություն-ների համար յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար, համաձայն պայմանագրերի, պետք է վճարեն սահմանված տույժեր:
53.	Հանրային կյանքի բոլոր ոլորտներում որոշումների կայացմանը երիտասարդների մասնակցության բարձրացում	53.1 Երիտասարդների շրջանում ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակության զարգացման մեթոդաբանության մշակում և ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատում	2022 թվականի դեկտեմբերի 2-ին հաստատվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Տեղական մակարդակում որոշումների կայացմանը երիտասարդների ներգրավման ուղեցույցը հաստատելու մասին» N 2227-Ա/2 հրամանը:	«Տեղական մակարդակում որոշումների կայացմանը երիտասարդների ներգրավման ուղեցույց»-ի մշակման նպատակով իրականացվել են տարբեր ուսումնասիրություններ, փորձագիտական

				հարցազրույց-ներ: Նախագիծը շրջանառվել է նաև բոլոր շահագրգիռ գերատեսչությունների միջև: Ստացված առաջարկությունները ամփոփելուց հետո այն ներկայացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի հաստատմանը: Վերոնշյալ աշխատանքները պատ-շաճ մակարդակով իրականաց-նելու համար պահանջվել է ծրագրով նախատեսվածից ավելի շատ ժամանակ:
		53.2 Ուսումնական հաստատու-թյուններում երիտասարդական ինքնակազմակերպվող խմբերի ձևավորման մեթոդաբանության մշակում և ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատում		Մեթոդաբանության մշակումը բխում է «Բարձրագույն կրթության և գիտության» օրենքի նախագծի կի-րարկման տրամաբանում-թյունից և այն կհաստատվի օրենքի ընդունումից հետո:
		53.3 Ժողովրդավարական և քաղաքացիական մասնակցության, կոռուպցիայի վերաբերյալ տեղեկացվածության բարձրացմանն ուղղված հանրային միջոցառումների կազմակերպում ազգային մակարդակով՝ ներառելով հաշմանդամություն ունեցող երիտասարդներին	Միջոցառման իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհային մրցույթում հաղթող ճանաչված «Եղվարդ» երիտասարդական բնապահպանական ՀԿ-ի հետ կնքվել է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր: Համաձայն պայմանագրի՝ նոյեմբերի 10-ից դեկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել է «Երիտասարդները՝ հանուն բովանդակալի մասնակցության» ծրագիրը, որի շրջանակում իրականացվել են հետևյալ միջոցառումները՝ *քառօրյա դասընթաց,*	

			ֆորում, համայնքային միջոցառումներ: Ընդհանուր հաշվով ծրագրին մասնակցել է Երևանից և ՀՀ մարզերից ընտրված 50 երիտասարդ: Քառօրյա դասընթացներն իրականացվել է դեկտեմբերի 1-4-ն ընկած ժամանակահատվածում՝ 30 երիտասարդի մասնակցությամբ: Դասընթացի ավարտից հետո տեղի է ունեցել երիտասարդական ֆորում 50 երիտասարդի մասնակցությամբ, որի ընթացքում կազմակերպած 3 պանելային քննարկումներն անցկացվել են «Ժողովրդավա-րություն .ազգային և տեղական մակարդակներ», «Երիտասարդական քաղաքականություն և երիտասարդների բովանդակալի մասնակցություն» և «Մեդիագրագիտություն և տեղեկատվական անվտանգություն» թեմաների շուրջ: Ծրագրի ամփոփիչ փուլում տեղի են ունեցել համայնքային միջոցառումներ՝ իրազեկման արշավներ, թեմատիկ դասընթացներ, ինտերակտիվ ուսուցողական խաղեր՝ ներգրավելով մեծ թվով մարզաբնակ երիտասարդների:	
		53.4 Մարզաբնակ երիտասարդների կարողությունների զարգացում՝ ուղղված մեդիագրագիտությանը, թվային գրագիտությանը և կիբեռգրագիտությանը	Միջոցառման իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհային մրցույթում հաղթող ճանաչված 2 կազմակերպությունների՝ «Լոֆթ 2» ՍՊԸ և «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոնի հետ կնքվել են պետության կողմից ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրեր: Շիրակի մարզի 250 և Լոռու մարզի 30 երիտասարդ մասնակցել է մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության ինտերակտիվ դասընթացների:	
54.	Երիտասարդության սոցիալ-տնտեսական խնդիրների բարելավում և մասնագիտական կարողությունների զարգացում	54.1 «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի իրականացում	2022թ. հունվարի 18-ին պայմանագիր է կնքվել «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ հետ, որի արդյունքում 2022 թ. հունվարի 1-ից դեկտեմ-բերի 30-ն ընկած ժամանակահատվածում ծրագրի շահառու է դարձել և սուբսիդավորում ստացել 838 երիտասարդ ընտանիք, որից 244-ը՝ Երևանից, 594-ը՝ ՀՀ մարզերից:	
		54.2 Ոչ ֆորմալ կրթական գործիքակազմով մասնագիտական	Միջոցառման իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհային մրցույթում հաղթող ճանաչված «Գորիսի պետական	

		վերապատրաստման հնարավորությունների, մասնագիտական կողմնորոշման ծրագրերի մասին երիտասարդության իրազեկության և ներգրավվածության բարձրացման դասընթացների կազմակերպում	համալսարան» ՊՈԱԿ-ի հետ կնքվել է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր: Համաձայն որի՝ Սյունիքի մարզի, այդ թվում՝ սահմանամերձ գյուղերի 290 երիտասարդի համար կազմակերպվել են առկա և առցանց 14 թեմատիկ դասընթացներ, որոնք տեղադրվել են Google Classroom միջավայրում: Դասընթացների արդյունքում 2 մասնակից նոր աշխատանքի առաջարկ է ստացել:	
		54.3 Երիտասարդության ֆինանսական գրագիտության բարձրացման, ինչպես նաև կոռուպցիայի վերաբերյալ դասընթացների կազմակերպում	Միջոցառման իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհային մրցույթում հաղթող ճանաչված «Խաչմերուկ» կրթական խորհրդատվական կենտրոն հիմնադրամի հետ կնքվել է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության մասին պայմանագիր: Համաձայն պայմանագրի՝ Շիրակի մարզի Աշոցք, Արթիկ և Գյումրի համայնքների 90 դեռահասների և երիտասարդների համար կազմակերպվել են ֆինանսական գրագիտության դասընթացներ և խնայողությունների տնօրինման ինտերակտիվ խաղեր՝ ուղղված մասնակիցների ֆինանսական գիտելիքների բարելավմանը, կառավարման հմտությունների ձևավորմանը, ընտանեկան բյուջեի առավել արդյունավետ տնօրինմանը, խնայողությունների մշակույթի ձևավորմանը:	
		54.5 Երիտասարդների շրջանում զբաղվածության աջակցության ծրագրերի, աշխատաշուկայի պահանջների և կրթական ծառայությունների առաջարկի պատկերի վերաբերյալ տեղեկատվության շարունակական տարածում	ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող erit.am (https://erit.am/am) երիտասարդա-կան հարթակում պարբերաբար տեղադրվել է զբաղվածության, մասնագիտական կողմնորոշման աջակցության, աշխատաշուկայի պահանջների և կրթական ծառայությունների վերաբերյալ շուրջ 150 տեղական և միջազգային ծրագրերի մասին տեղեկատվություն:	
		54.6 Բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի կառավարման կարողությունների զարգացման	Միջոցառման իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհային մրցույթում հաղթող ճանաչված «Իրական դպրոց»	

		առկա հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում երիտասարդության շրջանում	ԿՄՀ-ի հետ կնքվել է պետության կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր: Համաձայն պայմանագրի՝ Երևանի, Գյումրու, Վանաձորի, Գորիսի, Լեռնային Ղարաբաղի (Ստեփանակերտ, Կարմիր Շուկա և Թաղավարդ գյուղեր) «Արմաթ» ինժեներական աշխատանոցներից ընտրված սաների, ինչպես նաև՝ «Իրական դպրոց» ԿՄՀ-ի Իջևանի մասնաճյուղի սովորողների համար կազմակերպվել են բնակչության պաշտպանության, աղետների ռիսկի կառավարման կարողությունների բարելավման և առաջին բուժօգնության դասընթացներ: Ընդհանուր հաշվով դասընթացներին մասնակցել է նախատեսված 50-ից ավելի երիտասարդ: Ծրագրի շրջանակում մշակվել է առաջին բուժօգության ուղեցույց, որը տեղադրված է First Aid հարթակում և հասանելի է բոլորի համար:	
55.	Երիտասարդության ոլորտում համահայկական և միջազգային համագործակցության զարգացում	55.1 Միջազգային փառատոներին, խորհրդաժողովներին, մրցույթներին, գիտաժողովներին, սեմինարներին, դասընթացներին և այլ հանրային միջոցառումներին ՀՀ երիտասարդների և երիտասարդական պատվիրակությունների մասնակցության աջակցություն	Տարվա ընթացքում միջազգային տարաբնույթ հարթակներում հանդես գալու համար ավիատոմսի ծախսի փոխհատուցում է տրամադրվել 15 երիտա-սարդի 3 773 930 դրամ ընդհանուր ծավալով:	

Սփյուռք				

57.	Սփյուռքի կրթօջախների կարողությունների հզորացում	57.1 Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպում	2022 թ. օգոստոսի 1-15-ը իրականացված ծրագրին մասնակցել են 125 ուսուցիչ՝ 21 երկրից, որոնցից 15-ը հիբրիդ, 110-ը առցանց ձևաչափով: Վերապատրաստված 116 սփյուռքահայ ուսուցիչներ ստացել են ավարտական վկայականներ:	